

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԻՄԱՐՔԱՐԱՆ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄԻՆ

ԴՐ ՏՈՒՆ

2 ՓԵՏՐՎԱՐ 1879



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԸԵԱՆ

1879

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Ստեփան Կաշա Ասլանեան	Ա. Ատենապետ
Տիգրան Էֆենտի Կապուֆեան	Բ. »
Յովհաննէս Էֆենտի Կապուֆեան	Գ. »
Մկրտիչ Էֆենտի Մելիքեան	Ա. Ատենապետ
Ատովմ Էֆենտի Տէրոյենց	Բ. »
	Գ. »

ՁԵՌՆԱՅԻՆ ԴԻԻԱՆ

Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան	Ատենապետ
Ներսէս Կարդապետ Ասլանեան	
Աննաքերիմ Էֆենտի Մանուկեան	

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Խորէն Արքեպիսկոպոս Նար-պէյ	Ատենապետ
Գէորգ Էֆենտի Ապտուլլահ	
Գէորգ Էֆենտի Աթլիարաճեան	

ԿԱԼՈՒԱԾՈՅ ԴԻԻԱՆ

Յովհաննէս Էֆենտի Կապուֆեան	Ատենապետ
Մինաս Էֆենտի Գալիստանեան	
Պողոս Էֆենտի Ժամակոչեան	

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Էֆենտի Շահարաբեան	Ատենապետ
Յարութիւն Էֆենտի Մէրեթ-Գուլի	
Ստեփան Էֆենտի Փափազեան	

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Առաքել Էֆենտի Աթուհ-Տիգրի	Ատենապետ
Մատթէոս Էֆենտի Ալիբաճեան	
Յակոբ Էֆենտի Արշակ	

ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Եպիսկոպոս Սերոբեան	Ատենապետ
Թադէոս Էֆենտի Պէկեան	
Սահակ Ապրո Էֆենտի	

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յովհաննէս Էֆենտի Պոյաճեան	Ատենապետ
Մկրտիչ Էֆենտի Կապուֆեան	
Տօթօր Փէշտիմալեան Էֆենտի	

ԻՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յարութիւն Էֆենտի Նորատունկեան	Ատենապետ
Ատովմ Էֆենտի Տէրոյենց	
Գաբրիէլ Էֆենտի Գրասեան	

ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄՐՆ

ՆԻՍՏ ԺԶ.

2 ՓԵՏՐՎԱՐ 1879

ՆԱԽԱԶ. — Տ.Մատթէոս Եպս. Իզմիրլեան (առժամեայ կարդեալ)

ԱՏԵՆԱՊԵՏ. — Ստեփան Կաշա Ասլանեան

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵԿԵՆԵՑԱՆՔ

1. Խորէն Արք. Նար Պէյ Բ. 4
2. Կարապետ Եպսկ. Սերոբեան Բ.
3. Մատթէոս " Իզմիրլեան
4. Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց Բ. Պ
5. Գարեգին " Թաթարեան Բ.
6. Խորէն " Կիրոյեանց Բ. Պ
7. Հմայեալ " Դիմաքեան Բ.
8. Յովհաննէս " Փափազեան Բ. 2
9. Ներսէս " Ասլանեան
10. Պողոս " Խոջաճեան Բ.
11. Արիստակէս Ք. Մամբրեան Բ. 2
12. Գէորգ " Արծրունի Բ. 2
13. Գրիգոր " Աճէմեան
14. Խորէն " Փէշտիմալեան Բ. 2
15. Յարութիւն " Սերոբեան Բ. 2
16. Յովհաննէս " Մկրեան Բ.
17. Սուքիաս " Ստեփանեան Բ.
18. Սահակ " Տ. Մարգարեան Բ.
- 19.
- 20.

ՔԵՆՈՐԶԱՆՔ

(Ա. Վիճակ)

Գումգալիու, Կիւսիկ փաշա
և Գումգալիուի դուրա

21. Գրիգոր Պէշտիմալեան Բ.
22. Գէորգ Ստիմարաճեան Բ.

Բ. Բացակայութիւն առաջին
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ
Բ. Պ Բացակայութիւն երրորդ պատճառ

23. Խաչիկ Մանուկեան Բ. Պ
24. Կարապետ Աղարդմանեան Բ.
25. Համբարձում Մազպուլեան Բ.
26. Մինաս Գալիստանեան Բ. Պ
27. Յովհաննէս Պոյաճեան
28. Ն. Մէլիքեան Տօթօր Բ. Պ
29. Պողոս Պառնասեան
30. Սարգիս Աղարդիեան Բ. 2
31. Սահակ Ապրո Բ. Պ
32. Աննաքերիմ Մանուկեան Բ. 2
33. Փէշտիմալեան Տօթօր Բ. 2
34. Բարթոլ Քիւրքճապաճեան
35. Ատովմ Տէրոյենց Բ.
36. Գէորգ Ապտուլլահեան Բ. Պ
- 37.

(Բ. Վիճակ)

Պէշտիմալ

38. Անդրանիկ Կրճիկեան Բ. 6
39. Ալիքան Խորատանեան Բ.
40. Բարսեղ Հայաճեան Բ.

ԵԼԵԿԴԱԿԻՈՒ

41. Մկրտիչ Քիւրքճապաճեան
42. Սեպուհ Մազպուլեան Բ. 2
- 43.
- 44.

ԽԱՍԻԿԱՐ Ս. ԽԱՅ

45. Թադէոս Պէկեան (հրաժարեալ)
46. Սիմոն Յէլեկեան Բ. 2
47. Ստեփան Ասլանեան
- 48.

ԽԱՍԻԿԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՏ

49. Միհրան Պաճէրաբեան Բ. 2
50. Պողոս Թորոգճեան Բ. 2
51. Նիկողոս Ալաճանեան Բ.
52. Տրդատ Փափազեան

(Գ. Վիճակ)

Բերա և

Գաւառ փաշա

53. Աբիկ Ռեճեան
54. Գրիգոր Ալիմիճեան Բ.
55. Մարտիրոս Յ. Տիլեան Բ. 2
56. Մկրտիչ Մամիկոնեան
57. Նշան Բաղաճեան Բ. Պ
58. Ստեփան Խնդիրեան Բ.
59. Տէրեմար Մ. Էրսէճեան
60. Յարութիւն Նորատունկեան Բ. Պ
- 61.
- 62.

ՄԻԿԱԳԻՂ

63. Յակոբ Նորատունկեան
64. Տիգրան Երեստեան Բ. Պ
65. Պողոս Երեստեան
66. Մկրտիչ Նորիկեան
67. Մկրտիչ Գազանճեան

ՊԵՏՐՈՒ և ՂԱՐԱՔԻԱ

68. Յ. Մէրեթ-Գուլի Բ.

(Դ. Վիճակ)

ՂԱՐԱՔԻԱ և ԻՃԱՍԻԷ

69. Յովհաննէս Կապուֆեան
70. Ստեփան Պէշտիմալեան

Գաղութային	
71. Կարապետ Շահապետ	Բ
72. Մկրտիչ Մուրադյան	
Նարդարապետ	
73. Յակոբ Ելմիսյան	
Երևանահայկ Սամարիոյ	
74. Պողոս Մկրտիչյան	Բ,
Թովմայի	
75. Յովհաննէս Մարգարեան	
Լյուսի Ս. Եղիս և Ս.	
Աստուածաբան	
76. Գարեգին Յ. Մելիքեան	Բ.
Գործուղիչ	
77. Աստիա Իկիտապետ	
Հասար և Պոյաճի գիւղ	
78.	
Նոր գիւղ և Սրէնիս	
79. Ղազար Հովսեփ	
Պարս	
80. Մկրտիչ Գ. Լսեան	Բ Պ
81. Յովհաննէս Կրճիկեան	Բ 2
82.	
Բարակակերի	
83. Յարութիւն Զեմերեան	Բ.
84.	
(Ե. Վիճակ)	
Սամարիս	
85. Ալեքսան Գլխերեան	
86. Եղիշապար Մելիքեան	Բ 4
87. Մինաս Ճափնապետ	Բ 2
88. Յակոբ Ամասեան	Բ
89. Նազարէթ Շահապետ	
90. Յարութիւն Թիւրեան	
91. Յակոբ Արշակ	Բ Պ
92.	
93.	
94.	
Խաւարի	
95. Առաքել Ալթուն Տիւրքի	Բ,
96. Ռէթէոս Գլխերեան	Բ 4
97. Սարգիս Արաւազեան	Բ 2
98.	
99.	
100.	

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՄՈՒԱՆՔ	
Կարին	
101.	
Քէօրանեա	
102. Մ. Փափազեան Տօրթօր	Բ
Անդրիանապոլիս	
103.	
Նիկոմիդիա	
104. Կարապետ Ս. Իսիկեան	
Ալին	
105. Պետրոս Միսաքեան	
Հարանիսար	
106.	
Արարիկ	
107. Կարապետ Իսախանեան	Բ,
Բաղէ	
108.	
Պրոս	
109. Քրիստոստոյր Ղազարոսեան	
Երդնիս	
110.	
Անուսիս	
111. Համբարձում Ալաճաճեան	
Բալու	
112. Յովհաննէս Աղեաորեան	Բ. Պ
Երևիս	
113. Յակոբ Իսիկեան	
Մանգրիս	
114.	
Հաճըն	
115.	
Երզնկա և Բարերդ	
116.	
Թէքիրտաղ	
117. Տիգրան Գ. Արեանեան	Բ.
Կիւսարիս	
118. Գէորդ Գլխերեան	
Խաւարի	
119.	
Պարս	
120.	

Մուշ	
121. Ստեփան Փափազեան	
Տիւրիկ	
122. Նաւ Գարապաշեան	Բ,
Զէյթուն և Մարաշ	
123.	
Տրապիզոն	
124. Տիգրան Տ. Ներսէսեան	Բ,
Պարս	
125. Մելքոն Իսկէնտէրեան	Բ. 6
Տիգրանակերտ	
126. Միշրան Զօպանեան	
Վան	
127.	
Արարիկ	
128.	
Հալիս և Այնթապ	
129.	
Սերասուիս	
130. Մկրտիչ Յ. Մելիքեան	
Ռուստու խ	
131.	
Կարս	
132. Աբրահամ Յ. Ալազեան	
Զմիւղապ	
133. Համբարձում Սարգսէիլեան	
Գաղաթիս	
134.	
Ատանա	
135.	
Սըրերդ	
136. Մատթէոս Ալեքսանեան	Բ,
Եօզրատ	
137. Լօղօթիթ Պալեօզեան	
Մարսիս	
138. Գէորդ Վարդանեան	Բ,
Իզմիր	
139. Պապի Պապեան	Բ,
Եգիպտոս	
140.	

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Աղգ. Կեդր. վարչութեան Հաշուեկշիռ 1879—80 տարւոյ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ի բացակայութեան Ս. Պատրիարք Հօր, Իզմիրեան Տ. Մատթէոս Եպիսկոպոսի առժամեայ Նախագահութեամբ ատենանք բացուեցաւ ժամին 7 1/2 ին ի ներկայութեան 26 երեսփոխանաց, որոց վերջին թիւը յանգեցաւ 37 ի :

Չ.

Բնդունելութիւն նախորդ ԺԳ. և ԺԵ. ճիշտութեամբ ատենագրութեանց .

Ատենապետ փառանքալիկ երկու նիստերու ատենագրութիւններէն նախապէս ԺԳ. ի վրայ ի դիտողութիւն հրաւիրեց երեսփոխաններն :

ՊՅՅԱՃԵԱՆ Յ. ԷՅ. — Երես 266. սիւ.

նակ Ա. վանայ երեսփոխանական ընտրութեան առթիւ ըրած մէկ խօսքս սխալ արձանագրուած է . ճիշդը պիտի ըլլայ սապէս . « գուցէ պատերազմական վիճակին պատճառաւ դժուարին եղած ըլլայ վանայ մէջ դաւառական ընդհանուր ժողով գումարելու . ուստի . . . » :

Տ. ՄԱՏԹԵՈՍ ԵՊԻՍԿ. — Երես 266. սիւ. նակ Ա. ետալ վանայ երեսփոխանական ընտրութեան առթիւ խօսք մ'ունիմ, որ թերի է և պիտի ըլլայ սապէս . « Գաւառական ժողով չունինք կըռնն . սխալ է . 1874 ին երբ Սահմանադրութեան վերաբնութեան առթիւ դաւառներէն դիտողութիւններ ուղղեցան, վանայ դաւառական ժողովը պատասխանեց . ըսել է թէ ունին դաւառական ժողով, բայց չեն գումարած և անոր միջոցաւ չեն ընտրած իրենց երեսփոխանը » :

Ուրիշ զխոռոչութիւն ընող չըլլալով . ԺԴ. նիստի ատենագրութիւնը քուէի զրուեցաւ վերայիշեալ զխոռոչութեամբ հանդերձ և ԸՆ. ԴՈՒՆՈՒՆՅԱՒ Ժողովէն :

Յետոյ ԺԵ. նիստի ատենագրութիւնը զխոռոչութեան ենթարկուեցաւ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Երես 324 . սիւնակ Ա. վերջին տողէն սկսած խօսքիս մէջ պակաս մը կայ , որ պիտի ըլլայ . « քանի որ պիւտճէ է շինածնիս , պէտք է որ մետաղի վրայ ըլլայ . ապա թէ ոչ օդին վրայ հիմնուած կըլլայ » :

Ուրիշ զխոռոչութիւն ընող չըլլալով, ԺԵ. նիստի ատենագրութիւնն ալ սոյն զխոռոչութեամբ հանդերձ քուէի զրուելէ ետեւ ԸՆԴՈՒՆՈՒՆՅԱՒ Ժողովէն :

2.

Խաղաղարարիւնք

Ազգային երեսօտիսաններէն՝

- Յակոբ ԷՖ. Արշակ
- Յարութիւն » Նորատուեկեան
- Նան » Քաղաղեան
- Տիգրան » Եռասփեան

Տօրթէօր Մէլգպուրեան ԷՖ. անձնական տկարութեան պատճառաւ , և Յովհաննէս ԷՖ. Աղնաւորեան ճամբորդութեան պատճառաւ խաղաղարարիւնին յայտնած ըլլալով , օրինաւոր խաղաղարարիւնեացան ներկայութեան տուամարին մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Նախորդ նիստէն երկու գիր ունէինք , զորս ինչպէս կը յիշէք , առանց ընթերցման ատենագրութեան մէջ անցունել որոշեցիր . ասոնց մէկն էր Վարչութեան խառն ժողովոյ յայտագիրն որով Ե.

րուսադէմայ վանքին ելեմտից և ներքին վիճակին տեղեկանալու , ներկայ վտանգաւոր վիճակէն միանգամ ընդ միշտ փրկելու համար երկու երեք Քննիչ զրկել որոշած ըլլալը յայտնելէ ետեւ , սոյն քննչաց համար 200 լիւրացի վարկ մը կը խնդրէր : Այս գիրը զոր ի հարկէ կարգացիր ատենագրութեան մէջ և կամ տակաւին ժամանակ ունիւր կարգաւոր , պէտք է յղենք նախարանութեան , որպէս զի տեղեկագիրը գալէ ետեւ խնդրոց կարգը մօտէ իր կարգին վիճարանութեան ենթարկուելու համար : Աւտի եթէ առարկութիւն մը չունիք , կը յղենք զայս Համարակալութեան և Կալուածոց միացեալ դիւանաց :

Ժողովն առանց զխոռոչութեան ԸՆԴՈՒՆՅԱՒ սոյն յղումը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Երկրորդն է այն տեղեկագիրն՝ որ Համարակալութեան դիւանէն կուգայ Վարչութեան առաջարկած տրոց կանոնագրի ծրագրին վրայ . այս տեղեկագիրն ալ խնդրոց կարգը պէտք է անցունենք իր կարգին վիճարանութեան ենթարկելու համար :

Ասոնք սոյսպէս կարգադրելէ ետեւ կանցնինք այսօրուան թղթակցութեանց :

Ժողովն ԸՆԴՈՒՆՅԱՒ սոյն տնօրէնութիւնը :

3.

Յայտագիր Քաղ. Ժողովոյ Ազգ. Վարչութեան .

Ազգ. Վարչութեան Քաղ. Ժողովէն եկած յետագայ յայտագիրը կարգացուեցաւ .

Վսեմափայլ Ատենապետ փաշա

Ազգային Ժողովոյ .

Քաղաքական Ժողովս իր ներկայացուցած յառաջիկայ տարւոյ պիւտճէին

մէջ 4050 զրշի ամսական գումարի մը յաւելումն առաջարկած էր Պատրիարքարանի պաշտօնէից թոշակին անբաւականութեան պատճառաւ , որ խիստ ըզգալի եղած էր արդէն թղթագրամի տարապայման անկմանն առթիւ : Իսկ Համարակալութեան դիւանը թղթագրամին յարափոփոխ վիճակին առջև փոխանակ այս նոր յաւելումը պիւտճէին մէջ ընդունելու կառաջարկէր արտօնութիւն տալ Վարչութեան , որ ներկայ 78—79 տարւոյն համար խնդրէ այսպիսի վարկ մը առժամանակեայ կերպով պաշտօնեայնեքը գոհ ընելու համար և յառաջիկայ տարւոյն համար ալ սոյն վարկի խնդիրը ներկայացնելու արտօնութիւնը վերապահէ և թէ այն ատեն ալ պէտք տեսնէ . Պատկառելի Ժողովդ ալ սոյն առաջարկեալ բարեփոխումն ընդունեց իւր վերջին նիստին պիւտճէին ծախուց մասը յօդուած առ յօդուած քուէարկած ատեն :

Ըստ այսմ Քաղ. Ժողովս հարկ կը համարի առ այժմ ներկայ 1878—79 տարւոյն յունվար ամսէն ցվերջ ապրիլի չորս ամսոց համար 4050 ականէն ընդ ամենն 16,200 զրշի վարկ մը առաջարկել Պատկառելի Ժողովոյդ յանուն պաշտօնէից Պատրիարքարանի , վերապահելով նոյն վարկը խնդրելու արտօնութիւնն ըստ որոշման Ժողովոյդ նաև յառաջիկայ տարւոյն համար , եթէ այն ատեն ալ Վարչութիւնն հարկ տեսնէ :

Վստահ ըլլալով որ Պատկառելի Ժողովդ ներկայ խնդիրս ընդունելու թեան արժանի համարելով գործադրու-

թեանը համար պարտ ու պատշաճ հրահանգը վուժացնել շնորհ կ'ընէ .

Մնամք յարգանքօք

Ի Դիմաց Քաղ. Ժողովոյ

Վասն Վասն

Ատենադպրի Ատենապետի
Գ. ԳԸԼԸՃՃԵԱՆ Լ. ՊԱԼԵՕՁԵԱՆ

27 յունվ. 1879

Պատրիարքարան Հայոց

Կ. Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Այս յայտագիրը նախընթաց նիստին վիճարանութեան դրուած պիւտճէի ծախուց կողմի մէկ կէտին վերաբերեալ վարկի մը խնդիրն է որ կառաջարկէ և որ նախաքննութեան յղուելու պէտք չունի , վասն զի Համարակալութեան դիւանն արդէն իր ըսելիքն այս մասին ըսած լիցուցած է : Ուրեմն ուղղակի խնդրոց կարգը կանցունենք պիւտճէին հետ նկատողութեան առնելու համար :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՖ. — Կառաջարկեմ որ ստիպուիմք իւր արուի և եթէ հնար է , այսօր վիճարանութեան առնուի այս վարկի խնդիրը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կարծեմ թէ այս խնդիրն ալ կապակցութիւն ունի պաշտօնէից վերաբերեալ այն խնդրոցն հետ , որ նախընթաց նիստին յետաձգուելով Վարչութեան և Համարակալութեան դիւանին համախորհուրդ որոշմանն յանձնուեցաւ . ուստի անոնց միաբանօրէն բերելիք նոր տեղեկագիրն կրնայ կցուիլ :

ԻԽԹԻՒՃԵԱՆ Յ. ԷՖ. — Ես առաջարկութիւնն Համարակալութեան դիւանին յղել կառաջարկեմ :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՖ. — Վարչութեան և Համարակալութեան դիւանին յղուած խնդիրը յաւելուելիք պաշտօնէից համար էր . այն զատ

խնդիր է . տակաւ չորս ամսոց համար պաշտօնէից վերաբերեալ վարկի մը առաջարկութիւն է , որ միսին հետ կցուելու պէտք չունի :

ՊԱԼԵՕՋԵԱՆ Լ. ԷՖ. — (Անդամ Փառաքալան Ժողովոյ) Այս խնդիրը մեծ կարեւորութիւն ունի Վարչութեան համար . պէտք է ստիպողաբար որոշուի . Վարչութեան թւերը կապուած են գրեթէ , անոր համար ստիպողութիւն տալ կառաջարկենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում կարծիքները կը տարբերին և Վարչութիւնը ստիպողութեան առաջարկութեան կը յարի , պէտք է որ նախ ստիպողութեան կէտը բուէի ենթարկեմ : Ով որ կընդունի որ նոր տարւոյս Ա. չորս ամսոց համար Վարչութեան խընդրուած փորձի վարկն Օրակարգն անցնի և ըստ ստիպողութիւն տրուելով ամենէն առաջ վիճաբանութեան դրուի , ձեռքը վեր վերցնել չընորհ ընէ :

14 ձեռք ամբարձան : Իսկ հակադիրքին 3 քուէ միայն համալուծեցան :

Հետեւապէս Ժողովն ԸՆԴՈՒՆԵՑ ստիպողութիւն տալ Վարչութեան առաջարկութեան և Օրակարգին գլուխը ղետեղել զայն :

4.

Տեղեկագիր Համարակալութեան դիւանի ի վերայ առաջարկութեան Փախագեան էֆէնտիի

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը յիշէք որ նախընթաց նիստին պիւտճէի ծախուց վերաբերեալ կէտերուն քննութեան և որոշման պահուն Փախագեան Ստեփան էֆէնտի առաջարկութիւն մը ըրած էր 2 կէտերէ բաղկացեալ , մէկը դաւառական այցելուաց ծախուց և միւսն առաջնորդ պահելու անկարող դաւառաց օգնութեան համար . այս առաջարկութիւնը յղուած էր Համարակալութեան դիւանին ի նախաքննութիւն : Ահա անոր տեղեկագիրն :

Զայս ըսելով Ատենապետ փաշան կարգաց յետագայ տեղեկագիրը .

Համարակալութեան Դիւանս փախագեան Ս. էֆէնտիին սոյն երկու առաջարկութիւնները նկատողութեան առնելով ընդունելութեան արժան կը դատի փոքր բարեփոխութեամբ մը :

Ա.

Անցագրատան հասոյթը կրկնապատկելով , կէսն ըստ նախկին սովորութեան յանձնել Հիւանդանոցի Հոգաբարձութեան և միւս կէսը ի դաւառադիւղելիք այցելուաց ծախքին յատկացնել :

Բ.

Անհովիւ ու անկարող վիճակաց համար տարեկան 24000 զըշ. սահմանել պիւտճէին մէջ , և յանձնել Վարչութեան Խառն Ժողովոյ որ արժան դատած վիճակաց ի հարկին յատկացնէ :

1 փետր . 1879 Տեղեկագրեր 8. ԱՐՇԱԿ

ԱՊԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս տեղեկագիրը բնականապէս խնդրոց կարգը պէտք է անցնի , որպէս զի իր կարգին Ժողովին ներկայանալով վիճաբանութեան ենթարկուի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ թէ խնդրոց կարգին , այլ Օրակարգին մէջ պէտք է անցնի , վասն զի պիւտճէի հասոյթից քննութեան առնելն , որ Օրակարգն է արդէն , այս ալ պէտք է նայուի իրեն անոր հետ կապակցեալ խընդիր մը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ղուք կուգէք ըստ ստիպողութիւն տալ խնդրոյն . որ ստուգիւ հա-

ստիպող մասամբ կցեալ է պիւտճէին հետ . սակայն ըստ որում երկու տարբեր և բաւական կարեւոր կէտեր կը պարունակէ , որ են դաւառական այցելութեանց և անկարող վիճակաց օգնութեան կէտերն որք թէպէտեւ երբեմն ընդունուած և գործադրուած իսկ են , սակայն իբր օրէնք հաստատուած չըլլալով , պէտք է կարծեմ նախապէս ասոնք որոշել և վճարել և ապա անոնց վերաբերեալ երմտական կարգադրութիւնք ընել պիւտճէի նկատմամբ . այդ պատճառաւ առաջարկեցի խնդրոց կարգը դրնել տեղեկագիրը և ոչ թէ օրակարգին անցունել :

Փախագեան էֆէնտի յետոյ առաւ իր ըստ ստիպողութեան առաջարկութիւնը և Ժողովն ԸՆԴՈՒՆԵՑ ղետեղել տեղեկագիրն խնդրոց կարգին մէջ :

Յ.

Տեղեկագիր Ատենապետաց դիւանին ի վերայ խնդրոց հրաժարականի Ս. Պատրիարք Հօր :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ինչպէս կը յիշէք անցեալ նիստին Ատենապետաց դիւանին երկու գործ յանձնեցիք , մէկն էր Ս. Պատրիարք Հօր հրաժարման խնդիրը նախաքննել , միւսն էր Ժողովին որոշումը Նորին Սըրբազնութեան հաղորդել : Ահա ասորիկ այս մասին Ատենապետաց դիւանին տեղեկագիրը .

(Եւ կարգաց հետեւեալը)

Ատենապետաց Դիւանը ամսոյս 21 ին Սրբազան Պատրիարքի տունը Ժողովելով , պատիւ ունեցաւ Նորին Սրբազնութեան հաղորդելու Պատկառելի Ժողովոյդ որոշումը և յետ բանակցութեան ստացած որոշումը սա՛ լեղաւ որ Սըրբազան Պատրիարք Հայրը իր հրաժարման պատճառ տուող պարագայները

քանի որ կան և մնան , չկրնար յետս կոչել իր հրաժարականը , բայց սակայն զիջանելով յանուն Ազգին իրեն մատուցուած խնդրանաց՝ յանձն կառնու իրբեւ Հայր հասարակաց իր խնամքը շարունակել Ազգին գործոց և անոնց յօգուտ Ազգին ուղղութեանը հակել մինչև ի նոր տնօրէնութիւն :

21 յունւլ . 1879 Դուռագալու

Ատենապետ Ազգային Ժողովոյ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

Ատենապետ Ազգային Ժողովոյ Մ. Յ. ՍԷԼԻԲԵԱՆ

Ատենապետ Չեռհասարեան Դիւանի Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

Ատենապետ Պատրիարակարեան Դիւանի ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊԻՍ. ՆԱՐ — ՊԷՅ

Ատենապետ Կարուստոց Դիւանի Յ. ԷՍԱԵԱՆ

Ատենապետ Համարակալութեան Դիւանի Ա. ԱԼԹՈՒՆ ՏԻՐԻՐԻ

Ատենապետ Իրաւաստեան Դիւանի ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍ. ՍԵՐՈՎԲԵԱՆ

Ատենապետ Նախաձեռնութեան Դիւանի ՅՈՎՀ. ՊՅՅԱՃԵԱՆ

ԱՏԱՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսել է որ Ս. Պատրիարքն իր հրաժարականն ետ չառնուր , և կը մնայ ինչպէս Բ. Դրան առջև նոյնպէս և Ազգին առջև հրաժարեալ Պատրիարք : Բայց Ատենապետաց դիւանը խնդրեց Նորին Սրբազնութեանէն որ գոնէ մինչև որ ազգին և Բ. Դրան կողմէ իր հրաժարականի մասին վերջնական տնօրէնութիւն ըլլայ , չարունակէ իր խնամքն Ազգին գործոց և անոնց յօգուտ ազգին ուղղութեա-

նը հսկէ : Նորին Սրբազնութիւնը բազում զօրութեամբ զիջաւ Ատենապետաց զիւսնին խնդիրն ընդունելու այն պայմանաւ որ իր հրաժարականն ընդունուի քանի որ պատճառները կան ու կը մնան :

Եթէ ասկէց աւելի բացատրութիւն ուղուի հնար է մեզ տալ . բայց քիչ մը ետքը խնդիրն կարգը պիտի գայ այդ բացատրութիւնները լսելու երբ Խառն ժողովոյ պատգամաւորութեան տեղեկագիրը կարգացուի , որ արդէն Գիւանին վրայ պատրաստ է : Ուստի զայս թողլով առայժմ , կանցնիմ Ատենապետաց զիւանին երկրորդ աշխատութեանը :

Յ.

Տեղեկագիր Ատենապետաց զիւանին ի վերայ երկրորդից ցուցակի ընտրելոց հրաժարուիլ անհրաժեշտ փաղ . Ժողովոյ :

Ատենապետ փաշան կարգաց յետագայ տեղեկագիրը .

Ըստ յանձնարարութեան Ազգային Պատկառելի Ժողովոյդ . Ատենապետաց Գիւանը Քաղ. Ժողովոյ հինգ ընտրելեաց հետեւեալ զեղջելի կրկնապատիկ ցանկը պատրաստեց բանակցութեամբ ընդ որս անկ էր , զոր ահաւասիկ Պատկառելի Ժողովոյդ կը ներկայացնէ :

- | | |
|--------------|-------------------------------|
| 1. Գարեգին | էֆ. Մէլիքեան |
| 2. Կոստանդ | » Կոստանդեան |
| 3. Խաչատուր | խան կարնեցի |
| 4. Ղազար | էֆ. Հովուեան |
| 5. Մարտիրոս | » Քօլօլեան |
| 6. Յակոբ | » Մերունեան (Մե. տաքսի վճռկն) |
| 7. Յարութիւն | » Նորատունկեան |
| 8. Գաբրիէլ | » » |

9. Աբէլ Էֆ. Կիւլպէնկեան
10. Գաբրիէլ » Էսաեան

2/14 փետր. 1879 Ս. ԱՍԼԱՆԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԷՍԱՆԵԱՆ Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵՆ
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՅՅԱՃԵԱՆ Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Քաղ. Ժողովոյ հրաժարեալ 5 անդամոց տեղ նորոգ ընտրութեան համար ըստ Կանոնադրութեան Ատենապետաց զիւանն երկրորդից թուով ընտրելեաց զեղջելի ցուցակն ահաւասիկ բերած է . եթէ մեծամասնութիւն ունենանք , նախ այս ցուցակին ամբողջութիւնը քուէի պիտի դնեմ , և եթէ չընդունուի նոր ցուցակ մը պատրաստելու հոգ կը տարուի : Եթէ կուզէք՝ կրնաք փորձել 24 ձայնից միտարանութիւնը :

Տ. ՄԱՏԹԵՈՍ ԵՊՍ. — Այո՛ , փորձենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Եթէ փորձը չը յաջողի առաջիկայ նիստին կը մնայ , բայց եթէ յաջողի և ընդունիր ցուցակն , քուէարկութեան համար հարկ չէ կարծեմ Ժողովոյ նիստին սպասել . կրնաք շտաբով մէջ օր մը նամակաւ կատարել քուէարկութիւնն ինչպէս ուրիշ ատեններու մէջ եղած է , և քուէարկման արդիւնքը կը ներկայանայ առաջիկայ նիստին յընդունելութիւն . այսպէս կրնանք նաեւ կատարել Գիւանի ամբողջացման համար Գ. Ատենապետի և Գ. Ատենապարի ընտրութիւնները , որպէս զի նիստի օրեր քուէարկութեամբ ժամանակ չկորսնցունենք . իսկ ցանկին ամբողջութեան վրայ եթէ զիտողութիւն ունեցող կայ , այսօր կրնանք լսել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Կառավարկեմ որ ցանկին ամբողջութիւնը քուէարկուելէ ետեւ եթէ ընդունուի , յառաջիկայ նիստին ընտրութիւնը կատարուելու համար հրաւիրագրոց հետ ցանկէն մէյմէկ հատ զրկուի երեսփոխանաց , որպէս զի քուէինն պատրաստած դան : Իսկ Գ. Ատենապետի և Գ. Ատենապարի ընտրութեան գալով , հարկ չկայ , ըստ որում

մէկ երկու նիստէն ետեւ անմիջապէս Ժողովին տարեկան փակումը կուգայ , և տարեգլխուն նոր զիւան պիտի կազմուի . ուստի աւելորդ աշխատութիւն կրկնայ այժմէն Գ. Ատենապետ և Գ. Ատենապարի ընտրել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ուրեմն քանի որ ցանկին ամբողջութեան վրայ զիտողութիւն չունի չկայ , պէտք է որ ցանկը քուէի դնեմ :

Զայս ըսելով Ատենապետ փաշան քուէի դրաւ Քաղ. Ժողովոյ երկրորդից ընտրելեաց ցանկը , որ առանց հակառակ քուէի 25 քուէով ընդունուեցաւ Ժողովին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Կաղաչեմ օրն ալ որոշեցէք քուէարկութեան համար , ըստ որում այսօր մեծամասնութիւն չըլլալուն կարելի չէ աստ կատարել :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Յ. ԷՅ. — Եթէ գալ ուր . բայց կարելի է նիստ մ'ալ ընել , կրնայ նոյն օրուան մնալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Այս առթիւ թող ներէ ինձ Ժողովն որ խմայնեմ թէ գործեր նիստի քանի շատցած են որ քանի մը շտաբով իրարու վրայ նիստ ընել պիտի պարտաւորինք : Ուստի յառաջիկայ որոշեմ օր պէտք է նիստ ընենք ոչ թէ Քաղ. Ժողովոյ հրաժարեալ անդամոց տեղ քուէարկութիւն և քուէահամար ընելու համար , այլ ուրիշ վիճարանելի ամենակարեւոր խնդրոց համար . իսկ այս միջանկեալ ընտրութեան համար կրնանք յառաջիկայ շտաբով միջ օր մը նամակաւ երեսփոխանաց քուէներն ուղել ինչպէս վայրկեան մի առաջ ըսի . և քանչայս ձեռք քուէահամարն անմիջապէս կատարելով արդիւնքը տեղեկաւորով յառաջիկայ նիստին բերել ի վստերացում : Եթէ ըսածս կընդունուի , հիմա կընդունուի ընտրել ուղեք է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Եթէ գալ ուր . բայց օր նիստ պիտի ընենք , այս ընտրութիւնն ալ նոյն օրը կընենք կը լինայ :

Ատենապետ Փաշան այս մասին Ժողովին կամքն իրանալու համար քուէի դնելով , Ժողովն 3 քուէի դէմ 20 քուէով ՈՐՈՇԵՑ յաջորդ նիստէն առաջ շտաբով մէջ նամակաւ երեսփոխանաց քուէներն ուղել և քուէահամարը կատարել քանչայս ներկայութեամբ :

Իսկ քանչայս գալով առանց վիճարանութեան որոշուեցաւ որ Մայր զիւանն ինք ըստանձնէ այս պաշտօնը և քուէահամարին արդիւնքը յաջորդ նիստին բերէ Ժողովին վաւերացման :

Դ .

Հարցում Քրիստոսոստ Լիւնտիի

Ազգային երեսփոխան Քրիստոսոստ է. ֆինտիի յետագայ հարցումը կարգացուեցաւ .

Վսեմափայլ Ատենապետ փաշա
Ազգային Ժողովոյ

Ազգային Ժողովոյ քառամեայ շըրջանին վերաբերեալ 57 խնդիր առկա տեսնելով նորոգ տպագրեալ խնդրոց ցուցակին մէջ , կառավարկեմ որ Մայր զիւանը սոյն 57 խնդիրներուն եւք մը տալով տեղեկագիր մը բերէ Ժողովին :

2 փետր. 79 Ազգ. երեսփոխան
Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Այս հարցումը Ժողովին մէջէն անցած գացած և անընթաց մընացած 57 խնդրոց կը վերաբերի . և ըստ որում Գիւանին կը պատկանի տար օրատաս խոնը , խօսքը չերկարելու համար կը օրատաս խոնեմ թէ մեր երկու քնիս կաշխատինք , եթէ կընդունիր , Ժողովին վերջին ծառայութիւն մ'ալ ընելու համար :

ՋԱՅՆԵՐ . — Շնորհակալ կըլանք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Քուէի դրէք :

ԱՅՆՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներքեցիք, չի կարծեր որ Վիստի աշխատութեան խոստումըն ալ ժողովին բռնարկութեամբը պէտք է վաւերանայ. ըսելով քուէի դրաւ, և ժողովն լՆԻՈՒՆԵՅ միաձայնութեամբ:

Յ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՅ

Ս. Պատրիարք Հօր հրաժարման խնդրոյն նկատմամբ Խառն Ժողովոյ պատգամաւորութեան մաստցած յետագայ տեղեկագրիւրը կարդացուցաւ:

Վսեմաշուք Ատենապետ Փաշա
Ազգային Ժողովոյ

Ազգային պատկառելի Ժողովոյ նախորդ նիստին մէկ քանի Երեսփոխան տեարց կողմանէ առ կեդր. վարչութեան Խառն Ժողովն եղած հարցման ի պատասխանի, կը վերաբեր արդ առ Բարձրապատիւ Մեծ Եպարքոսն ներկայացած Խառն Ժողովոյ պատգամաւորութեան նորին Բարձրութեան հետ ունեցած բանակցութիւնն ամբողջ մատուցանել Ազգային պատկառելի Ժողովիդ, որ է:

18 Յունվար 1879

Նորին բարձրութեան Մեծ Եպարքոսին Ազգային վարչական կազմութեան վրայօք ըրած ինչ ինչ հարցմանց վրայ պատգամաւորութիւնը տեղեկութիւն տուաւ թէ՛

Հայոց Ազգը՝ բոլոր Թուրքիաքանակ Հայերէն ընտրեալ երեսփոխաններէ կազմուած Ընդհանուր Ժողով մ'ունի. այս Ժողովէն կընտրուին Կրօնական և Քաղաքական Ժողովները, ինչպէս նաև Պատրիարքը, որ կընախագահէ այս Ժողովներուն:

Պատգամաւորութիւն. — Հայոց Պատրիարքարանի Խառն Ժողովոյ կողմանէ յանուն Ազգին Ձեր բարձրութեան կը ներկայանայ պատգամաւորութիւնս այսօր յայտնելու համար թէ՛ Հայոց Ազգը՝ ինչպէս անցելոյն նոյնպէս և ներկայիս մէջ զանազան հարստահարութեամբ կը տառապի և կը չարչարուի, և որք հետք հետ՝ բազմապատկուելու վրայ են, Այս չարեաց անմիջական դարմանը ի դործ չդրուելով վերջին օրերս աղիտաբեր վիճակ մ'առած ըլլալուն համար է որ Հայոց Պատրիարքը հրաժարած է իւր պաշտօնէն, և չնախագահէր Կրօն, և Քաղաքական Ժողովներուն, հետեւապէս և Ազգին դործերն ալ երեսի վրայ մնացած են: Ժողովս կուզայ իրաց այս վիճակը Ձեր բարձրութեան ներկայացընելու, Հայաստանի մէջ տեղի ունեցած զեղծմանց և դործուած հարստահարութեանց անմիջական դարմանը խնդրելով հանդերձ:

Եպարքոս. — Շիտակն ըսելու համար թէ՛ մէկ կողմէն և թէ՛ միւս կողմէն շատ բաներ կըսեն ինձ, դժբաղդաբար թէ՛ մին և թէ՛ միւսը չափազանցութիւններով լեցուած են, Ես թէ և նորեկած եմ այս պաշտօնին և կատարեալ տեղեկութիւն մ'ունենալ այս բաներուն վրայ շատ դժուար է ինձ համար, սա-

կայն ես պաշտօնեայ մ'եմ որ ամեն հասարակութիւն հաւասար նկատելով ա. մենուն հանգստութիւնը և բարելաւութիւնը հաւասարապէս պիտի մատակարարեմ. իմ ճիգերս պիտի պսակուին, իրաւ որ չեմ գիտեր, բայց սա պէտք է գիտնալ որ ասանկ ծանր ժամանակի մը մէջ ա,ս երկրին Օսմանեան ամեն կարգի հասարակութիւնները, կուզէ Հայ ըլլայ, կուզէ Արաբ կուզէ Թուրք և այլն պարտաւոր են կառավարութեան ջանիցը օգնել և ոչ թէ դժուարութիւններ յարուցանել, դժբաղդաբար ինձ տըրուած տեղեկութիւններն այնպէս կը ցուցնեն թէ՛ Հայոց ազգը որ իւր դաւաւոր հաւատարմութեամբը միշտ օգտակար հանդիսացած է Օսմանեան Պետութեան, սոյն միջոցին չեղած է այս շաւղէն, ինչպէս ուրիշ Օսմանցիներ ալ, և կը դիմէ օտար ազդեցութիւններու և ան նցմէ շահ կըսպասէ, օտարը ինչ կրնայ ընել, օտարը իւր շահերուն համեմատ կը դործէ, և իւր շահերուն համեմատ կը թելադրէ զմին կամ զմիւսը, Պէտք է գիտնայ Հայոց ազգը, որ օտարներուն ամենն ալ համաձայն չեն Օսմանեան կայսրութեան օգտին ու շահուցը, ուստի պէտք չէ անոնց դործիք ըլլալ, այլ ընդհակառակն պէտք է գիտնալ թէ՛ այս աղէտից դարմանը Օսմանեան կառավարութիւնը միայն ի դործ պիտի կրնայ դնել, որուն ամեն կարգի հասարակութիւնը պէտք է դործակից ըլլան, որպէս զի կառավարութեան դործը գիւրանայ, այս նպատակաւ ահա երկու քօմիսիօն կարգեցի մէկը Եւրոպոսական Տաճկաստանի համար, որուն

նախագահը քրիստոնեայ փաշա մ'է, և միւսը Ասիական Տաճկաստանի համար, որուն նախագահը հարուստ և արդարասէր Տաճիկ փաշա մ'է. ասոնց լիազօր իշխանութիւն պիտի տամ որ մանրակրկիտ կերպով այդ չարեաց պատճառները քննեն և հեղինակները գըտնելու, անմիջապէս և առանց աչառութեան պատժեն, և այն բաները, որոց քննութիւնը կեդրոնին կը վերաբերի, պիտի տեղեկագրեն մեզ, Ասիական Տաճկաստանի համար կազմեալ քօմիսիօնը Հալէպէն սկսելով Տիարպէքիւր և Ասիայ այլ կուսակալութիւնները պիտի պտըտի, հոն ձեր Ազգն ալ առիթ կուտենայ իւր ամբողջ ցաւերը փաստի ձեռին ներկայացնել և դարմանը պահանջել, վստահ ըլլալով որ յանցապարտք իրենց պատիժը պիտի կրեն, ձեր եպիսկոպոսներն, երեւելիները, Ազգային պաշտօնական մարմինները նոյն քօմիսիօնին կրնան ասպաղային բարուք կառավարութեան միջոցներն առաջարկել, զի քննիչը պարտաւոր են զանոնք մըտիկ ընել, բայց այս բաները, ինչպէս կը տեսնէք, դիւրին չեն անմիջապէս դործադրել, և դարաւոր զեղծութիւնները քիչ միջոցի մէջ բառնալ, ուստի ըսէք Հայոց ազգին որ համբերէ և օգնէ մեզ մեր այս դժուարին պաշտօնին մէջ, Հայոց ազգը պէտք է յիշէ որ այսչափ դարեր Օսմանեան Տէրութեան հովանեաց ներքեւ իւր ազգութիւնը և իւր ամեն աւանդութիւններն ու սովորութիւններն անվթար պահած է, պատմութեան մէջ դժուարին է գտնել այնպիսի Տէրութիւն մը որ այս նուիրական բաները այսչափ պահպանած ըլլայ:

Պատգամաւորութիւն. — Հայոց ազգը առ Օսմանեան Պետութիւնն իւր դաւաճութեամբ հաւատարմութիւնը անվճար պահած է և կը պահէ. օտար ներշնչութիւնք բնաւ չեն ներգործեր իրեն, իւր բազմազան կուղիէ ձեռք բերել Հայաստանի մէջ և այն օսմանեան դրօշին ներքեւ. Հայոց ազգը Օսմանեան կառավարութեան բարենպատակ ձեռնարկութեանց օգնած է միշտ, հարստահարութեանց դարմանը և զեղծմանց բարձումը պահանջելն իսկ այսօր, ինչպէս յայտնի է Ձեր բարձրութեան, օգնութիւն մ'է. սակայն ցաւալի է ըսել որ Հայաստանի այլեայլ դաւաճներու մէջ ինչպէս են վան, կարին, Տիարպէքիւր, Սերաստիա և այլն, տեղի ունեցած զանազան հարստահարութիւնք տակաւին կը շարունակուին, առնոց դարմանին և յանցապարտներուն անաշուապէս պատժուելուն համար շատ անգամ քովսիօններ կազմուած և նախորդ Եպարդոսներէն խոստումներ եղած են. սակայն այս ամենը արդիւնք մը չեն արտադրած և իրաց վիճակը ինչ որ էր նոյնը մնացած է յայսօր, մանաւանդ աւելի վատթարացած. ասոր համար է որ Պատրիարքը յառաջ դացած է իւր թախանձանաց և պահանջմանց ձևին մէջ. որպէսզի կարող ըլլայ ժողովուրդը անվրդով պահել. սակայն երբ մինչ ցայս կէտ արդիւնք մը չտեսաւ, հրաժարեցաւ իւր պաշտօնէն և գործելէ քաշուեցաւ. այս կացութեան մէջ Խառն ժողովին դժուարին է գործել, եթէ տակաւին իրաց այս ցաւալի վիճակը չարունակէ, և անմիջական դարման մը ի գործ դրուելով

արդիւնքը երևան չգայ. Հայոց ազգը գիտէ համբերել և ընդերկար համբերած է, ինչպէս յայտնի է Ձեր բարձրութեան, սակայն և այս յայտնի է թէ համբերութիւնն ալ չափ մը ունի, այնչափ բազմացած են այս վերջին ժամանակներս զեղծմանց և հարստահարութեանց երեսէն Հայոց ազգին վիշտն ու տառապանքը, որ այլ ևս չկրնար տոկալ, հետևապէս և համբերել. նա մանաւանդ առաջարկեալ պայմանները չեն կրնար ակնկալել տալ այն հաստատ յոյսը թէ՛ արդիւնաւոր կերպիւ պիտի կատարուին, զի, ինչպէս ըսինք, շատ անգամներ այս օրինակ դարմաններու համար խոստումներ եղած, բայց անգործադրելի և ապարդիւն մնացած են. Հայոց ազգը անմիջական դարմանի գործադրութեամբ արդիւնք մը տեսնել կ'սպասէ.

Եպարդոս. — Անմիջական ի՞նչ ընել պէտք է, և ի՞նչ տեսակ ցաւեր են.

Պատգամաւորութիւն. — Անմիջապէս պէտք է ապահովութիւնը իրականացնել, զոր կառավարութիւնը ի գործ դնելու համար ամեն զօրութիւն և միջոց ունի. Դալով մեր ցաւերուն, Հայոց ազգին ցաւերը արդէն Պատրիարքական գրութեամբք հաղորդուած են Բ. Դրան, ինչպէս գիտէ Ձեր բարձրութիւնը. մանաւանդ ասկէ երկու երեք տարի յառաջ կազմեալ յատուկ քովսիօնի մը խորհրդածութեան ենթարկուած են. որոցմէ կրնայ մանրամասն հասկցուիլ.

Եպարդոս. — Ձեր ցաւերը Բիւրտեքէն են թէ պաշտօնեաներէն.

Պատգամաւորութիւն. — Բիւրտեքուն ձեռքով արդէն սպանութիւնք,

դողութիւնք, աւարառութիւնք, լըկանք, բռնաբարութիւնք, առեանդութիւն և այլ զանազան տեսակ չարիք կը գործուին հանապազ, որոց գէժ դրեթէ տեղական բոլոր պաշտօնեայք իրենց անհոգութեամբն ու արտարբերութեամբը թերադիր և քաջալեր կը դառնան չարագործաց. թող պաշտօնէից ի մնաս երկրին և ժողովրդեան գործած զեղծումներն.

Եպարդոս. — Դուք ընդհանուր տեսութեամբ կը ներկայացնէք չարիքները. ես կը՛փափաքեմ որ եղելութիւններ ցըցունէք.

Պատգամաւորութիւն. — Արդէն մինչև ցարդ Հայաստանի ամեն կողմերը պատահած եղելութիւններն օր ըստ օրէ Պատրիարքը գրով հաղորդած է Բ. Դրան, նոյնպէս և մասնաւոր գէպքերը. ինչպէս ըսինք երկու երեք տարի յառաջ կազմուած քովսիօնին ալ արուած է, անոնցմէ կրնաք տեղեկանալ.

Եպարդոսը այս միջոցին կոչել տրուաւ իւր խորհրդականը, առ որ հրամայեց.

Ա. Հայոց Պատրիարքարանէն հաղորդարութեանց նկատմամբ եկած բոլոր գրութիւններն հաւաքելով, նոյնպէս ասկէց մէկ քանի տարի յառաջ կազմուած քովսիօնի մը գործողութիւնքը, ինչ որ են, ամբողջապէս երևան հանելով՝ Ասիա երթալիք քովսիօնը ճամբայ չեղած ինձ բերէք.

Բ. Անմիջապէս Հեռագիր զարկէք բոլոր կուսակալներուն և բանակաց հրամանատարներուն որ երկրին անգործութեանն ու ապահովութեանը հոգ

տանին և հսկեն, որպէս զի Տաճիկք Քրիստոնէից և Քրիստոնեայք Տաճիկացի մը չը հասցնեն, և ուր որ զատնք ընելու միջոցները պակաս են, հոն պէտք է անմիջապէս զօրութիւն հասցնեն.

Պատգամաւորութիւն. — Հայոց ներկայ Պատրիարքը որ Տէրութեան և Ազգին միօրինակ մեծամեծ ծառայութիւններ մատուցած և բոլոր Հայոց Ազգին սէրն ու համակրանքը գրաւած և Տէրութենէն ալ յարգուած է, իւր անչափ աշխատութեանց և թախանձանաց հակառակ Ազգին դառնալէս վիճակին դարման մը չկրնալ ընելու ծանր պատասխանատուութեան առջև չկրնալով հանդուրժել, հրաժարելով գործելէ դադրած է, որմէ Ազգին գործոց ընդհատումն յառաջ եկած է. ըստ որում Խառն ժողովին առանց Պատրիարքի դժուարին է գործել, ուստի այս մասին ևս հարկ եղած դարմանը ի գործ դնել անհրաժեշտ է. որպէս զի Պատրիարքը լի վստահութեամբ իւր պաշտօնին զլուխը անցնի.

Եպարդոս. — Պատրիարքը կը կարծէ որ գործէ քաշուելով Ազգին օգուտ մ'ըրած կ'ըլլայ. զրուցեցէ՛ք Պատրիարքին որ ինձի գայ և համարձակ խօսի ինձ հետ. ցաւերն յայտնէ, դարմաններ առաջարկէ, ինչ որ պէտք է ընել ի միասին խորհրդակցելիք և ձեռք ձեռքի տալով մէկտեղ գործենք. այս է իմ պարտքս. Մի և նոյն երկրին պաշտօնեայներն եմք. ես մեծ վէղիր մ'եմ. ինք ալ Պատրիարք մ'է, իրեն հետ երկար և շուտով տեսակցելու պէտք ունիմ. սակայն ըստ որում այս տեսակ-

ցութիւնը հինգշաբթի օրուրէն առաջ հոս կատարելու ժամանակ չունիմ եւ այս ալ շատ ուշ է, ուստի եթէ իրեն ձանձրութիւն չըլլար, վաղը կամ միւս օր առաւօտուն ժամը չորսէն մինչեւ հինգ աւելի կանուխ շըսեմք որ զինքը չ'ձանձրացնեմք, թող հրամայէ դո՛ւք մեր ապարանքը, որպէս զի զրկուելիք Բօմի սիօնին երթալէն առաջ այս բաներուն վրայ խորհրդակցինք:

Պատգամաւորութեան մեկնելու միջոցին վերստին Եպարքոսը յանկայս յայտարարեց թէ ըսէք Հայոց Ազգին՝ որ ամեն զեղծմունք պիտի բարձունք եւ հարստահարութիւնք պիտի դադարին, եւ ամեն բարենորոգումներն ի դորձ պիտի դրուին, եւ պիտի մոյցելեն հանգստութիւն եւ անդորրութիւն, բայց համբերել պէտք է զխանան, մենք մէկ կողմանէ վերջին պարագայներէ յառաջ եկած դժուարութեանց լուծման եւ միւս կողմանէ ալ Ասիոյ ամեն կարգի հասարակութեան վիճակը բարւոքելու կը ջանամք, սակայն մեր բոլոր ուշադրութիւնը դէպ ի Ասիոյ կողմը դարձնելու ժամանակ չեմք ունենար, դուք իրաւունք կ'ունենաք ըսելու թէ այդ պատճառ մը չէ եւ պէտք է ժամանակ ունենաք, սակայն ինչպէս յայտնի է, մեր բոլոր ուշադրութիւնը այն կողմը դարձնելու ժամանակ ալ ունենանք, տակաւին դարաւոր զեղծումներէ յառաջ եկած անկարգութիւնք 24 ժամուան մէջ լուծուելիք խնդրոյ մը պէս կարելի չէ որ բարձունք, բայց անպատճառ պիտի բարձունք այս անկարգութիւնք եւ ի դորձ պիտի դրուին բարենորոգմունք:

Պատգամաւորութիւն. — Թերեւս կառավարութիւնը իւր բազմազան ըզրազմունքներով ժամանակ չունենար այս խնդիրն միանգամ ընդ միշտ լուծելու համար պէտք եղած բարեկարգութիւնը միութեամբ, այլ սակայն Հայոց Ազգն ալ հարստահարութեանց տուկալու անհնարութեան մէջ ինկած է, հետեւապէս անմիջական եւ իրական դարմանի դործադրութիւնը անհրաժեշտ եղած է:

Եպարքոս. — Անտարակոյս պիտի դործադրուին բարենորոգմունք, քիչ մը եւս համբերութիւն եւ դործակցութիւն:

Խառն ժողովը յատուկ պառագամաւորութեամբ մը սոյն բանակցութեան արդիւնքը ծանոյց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, նորին սրբազնութիւնը առ Բարձրապատիւ Մեծ. Եպարքոսն երթալու համար պատասխանեց թէ մտածեմ, ի վերջոյ խնայաւ Խառն ժողովն որ Յունի 22 ին գացեր է առ Մեծ Եպարքոսն:

Ի Դիմաց Պատգամաւորութեան կեդ. Վարչութեան Կրօն. եւ Քաղ. Խառն ժողովոյ

Բ. Ատենայեւտ Կրօն. ժողովոյ
Լ. Պալեղեան Մ. Եպիսկ. Իզմիրլեան
2 փետր. 1879

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս է ահա Աբրահամ Պատրիարք Հօր հրաժարականի խնդրոյն նկատմամբ Խառն ժողովոյ միջամտութեան արդիւնքը: Սոյն խնդրոյն վրայ Ժողովոյ յանձնարարութեամբ Զեր Ատենայեւտաց զիւանն ալ գնաց Ս. Պատրիարք Հօր հետ տեսակցեցաւ եւ տեղեկացաւ որ Նորին

Սրբազնութեան հրաժարման պատճառներն երկուք են՝ առաջին՝ Հայաստանի հարստահարութեանց շարունակութիւնը եւ խոտուցեալ բարեկարգութեանց յաճաղումը, եւ երկրորդ՝ իր անձին տկարութիւնը: Առաջին պատճառին նկատմամբ Ստենայեւտաց զիւանը յանուն Ազգին խնդրեց Նորին Սրբազնութենէն որ հարստահարութեանց բարձումը եւ բարեկարգութեանց դործադրութիւնը ինքն հրաժարեալ մնալով միայն ժամանակէն չըստատէ այլ շարունակէ իւր ջանքերն ու խնամքն, եւ յորդորեց որ հաճի երթալ Մեծ Եպարքոսին հետ բանակցիլ քանի որ Նորին բարձրութիւնը զինքը տեսնել ուզած է, եւ անվեհեր եւ անաչառ ներկայել նմա ազգին ցաւերը եւ յոյսերը եւ ազգային գործոց բարեօրման մասին իր օժանդակութիւնը մատուցանել, եթէ տեսնէ բարի կամեցողութիւն եւ օրինաւոր տնօրինութիւն Տէրութեան կողմէն: Ս. Պատրիարքը խոտուցաւ երթալ եւ խնայանք որ գացեր է:

Իսկ երկրորդ պատճառին գալով՝ Ստենայեւտաց զիւանը յանուն Ժողովոյս յայտնեց Նորին Սրբազնութեան որ երբ Հայաստանի բարենորոգմունք ի դորձ դրուիլ սկսին, Ազգային ժողովոյ պարտին է իր անձնական առողջութեան համար պէտք եղած ամեն միջոցներն հագալ եւ մինչեւ իսկ եթէ օգտախոտութեան համար ճարտարեղէն սկսար սնենայ, Ժողովը պատրաստ է այս մասին եւս պէտք եղած զիւրութիւնները տնօրինել, միայն թէ ինք հրաժարեալ եմ ըսելով Ազգին գործերն երեսի վրայ չ'թողու, այլ խօսք տայ շարունակել իր հայրական խնամքը եւ գործել: Ստենայեւտաց զիւանը բարեբաղդ է ըսել որ Նորին Սրբազնութիւնը չ'մերժեց իր խնդիրը եւ ինչպէս Տեղեկագիրէն խնայոյր, խոտուցաւ Ազգային գործոց ու զգութեանը հսկել միշտ հրաժարեալ մնալով առաջի Տէրութեան եւ Ազգին:

ԵՆՔՍԵՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Զեմ հասիլը նար ինչ ըսել է, Ս. Պատրիարքը հրաժարեալ ըլլալով հանդերձ գործէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սրբազն Պատրիարքը իր հրաժարականն յետս կոչել չհաճեցաւ, այս մասին մեր ամեն ջանքն ի դերեւ երան. Նորին Սրբազնութիւնն անդրադառնալով իր սրտման մէջ, բաց խոտուցաւ իրր Հայր հասարակոյ օգնել մեզ եւ գործերուն յօգուտ Ազգին ազգութեանը հսկել միշտ հրաժարեալ մնալով եւ այնպէս ստորագրելով զրութեանց, ինչպէս որ վերածով տեսանք, Նորին Սրբազնութիւնն առ դեսպանս ուղղեալ նուազեաց մէջ հրաժարեալ Պատրիարք տիազաով ստորագրած է:

Պանք խնդրոյն էութեանը, հիմա Ազգային ժողովը զիտէ ի պաշտօնէ թէ Ս. Պատրիարք Հայրն ինչ պատճառներով հրաժարական տուած է: Եւ ինչ պայմանաւ կը շարունակէ իր պաշտօնը: Կը մնայ այժմ հարցումն ընող երեսփոխացոյ կարծիքն իմանալ թէ այսրմով կը բաւականանան արդեօք, եթէ ոչ կուզեն իրենց հարցումը խնդրոյ նիւթ ընել եւ ի հարցադրեալ փոխարկել:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Հարցումն ստորագրող Երեսփոխաններէն մին) Մենք չենք ընդունած արդէն Նորին Սրբազնութեան հրաժարականը, որուն պատճառը բաժարցակապէս հարստահարութեանց շարունակութեան խնդիրն է, արդէն ըսած էի եւ նորէն կըսեմ թէ պէտք է Ազգային ժողովն ստանձնէ Ազգին այս մահաւ եւ կենաց խնդիրը, եւ իր ձայնը առաւել քան դառաւել բարձրացնէ որ որ անկէ: Խառն ժողովոյ Պատգամաւորութեան Մեծ Եպարքոսէն առած պատասխաններն անգործացելիչ եւ յատահատական են, կրկին նոյն խօսքերն եւ նոյն խոտուցանքներն են, ուրանք տակէյ 10 կամ 20 տարիներ յառաջ ալ կըլլային: Երբ պիտի գործադրի Պէրլինի գաղնադրութեան 61րդ յօդուածն, միթէ մինչեւ հոգինիւ երէտ պիտի սորտեն: Մեր ժողովրդեան նիւթական վիճակը հեղհեղէնը, ւսղեւու եւ ստացումքն սարսափեալ վրայ են, եւ Վանէն եկած զիւր մը կարգացն այս օրերս, այն տեղ դանուած ըլլաւերը հարկու հաշուր:

ներով ոչխար ունին, մինչդեռ բնակակից Հայերն որ տաճարատեղի առելի են թուով, անոր տաճարերով մասին չափ ալ չունին ոչխար ո՞վ առաւ անոնց կենդանիներն, կրնա՞յ ըսուիլ որ քիւրտերը կաշխատին և կը հարստանան, իսկ Հայերն ծաղութեամբ որ ըստ օրէ կ'աղբատանան, երբ մարդ մը ուտելիք չունենայ ի՞նչ կ'ըլլայ իր վիճակը. ինչպէս որ անհասի մը կեանքն է իր ստացուածքը, նոյնպէս ալ Աղբին ստացուածքն իր կեանքն է։ Աղբին ստացուածքն որ ըստ օրէ կը նուազի, ալ լուր կարելի՞ է. մենք այս տեղ Աղբին փոխանորդներն ենք, թէ և ես մէկ գաւառի մը կողմէ երեսօտեան ընտրուած եմ, սակայն Սահմանադրութեամբ ընդհանուր ազգին երեսօտեանն կը համարուիմ. երբէք խառն ժողովոյ պատգամաւորութեան ընդունած այդ խոստմունքները յուսադրական չեմ կրնար նկատել մեզի համար։ Ուստի կատարելեմ որ երեսօտեանական յանձնախումբ մը կարգուի որ ի քննին առնու առնեն բան և պատգամաւորութեամբ երթայ Բ. Գուռը և ուր որ սկսեք է մեր ցաւերն յայտնելու և դարմանը խնդրելու համար։

ԵՒՄԷՆԻՃԵԱՆ Յ. ԷՖ. — Կերկրորդեմ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն Բրիտոստոսը կ'ընեն, դուք կաղէք հարցումն ի հարցաւնդում փոխարկել և Սրբազան պատրիարքի հրամարականի խնդիրը որ զուգընթաց է հարստաւորութեան խնդրոյն, վիճաբանութեան նիւթ ընել ժողովի մէջ։ Ուրիշ կարծիք յայտնող կա՞յ։

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Թէ խառն ժողովոյ պատգամաւորութեան և թէ՛ Առնաւ պետաց ղեկանին կողմէ տրուած տեղեկութեան մէջ Ս. Պատրիարք Հօր Մեծ Եպարքոսին հետ ըրած տեսակցութեան արդիւնքին վրայօր բան մը չկար, կարելի չէ՞ արդեօք այդ ալ խմանալ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ հարցում մէջ եթէ գրով տայք, պատմութեանը կ'առնուք։

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Կըսուի թէ Մեծ Եպարքոսին խառն ժողովոյ Պատգամաւորութեան հետ ըրած խօսքերը յուսահատական են. ես չեմ կրնար զոյգ ըսել, քանի որ Նորին Բարձրութիւնը յանձնարարեք է Պատգամաւորութեան որ Ս. Պատրիարքն իրեն հետ գոյ տեսնուի, որպէս զի մէկտեղ խորհրդակցելով պէտք եղածը անօրինակ։ Մինչև որ այս տեսակցութեան արդիւնքը չի մանանք, այժմէն կարող չենք բան մը ըսել։

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Մենք կարծեօք կը գտնենք ի՞նչ խօսքեր եղած են Պատրիարքին հետ. ինչ որ պատգամաւորութեան ըսուած են, անկէ աւելի չեն կրնար ըլլալ։ Ուստի առաջարկութիւնս կը կրկնեմ. յանձնախումբ մը դուրս խորհրդարանական և ամեն բան յանուն ժողովոյս գործի։ Այս գործը մեզի համար պիտի լինէ և ամեն բանէն աւելի կարեւոր է։

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Այդ յանձնախումբը մեք ալ կողմէք որ ըլլայ. բայց Ս. Պատրիարքին և Մեծ Եպարքոսին վերջին տեսակցութեան վրայօր պէտք եղած տեղեկութիւններն առնուելէ ետեւ, որպէս զի յանձնախումբը գործին պարագաներուն վրայ կատարեալ տեղեկութիւն ունենայ։

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Բրիտոստոսը կ'ընեն իր առաջարկէ հարստաւորութեանց բարձման և բարենորոգմանց գործադրութեան խնդիրն այս ժողովին մէջ բերել, բայց կը յիշէք որ ժողովս բացարձակապէս Պատրիարքին յանձնած էր դոյն. եթէ անոր ձեռքէն պիտի առնենք, պէտք է տալի որոշումնիս փոխել և ասոր ալ հարկ չեմ տեսնել։

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Մենք չըսինք որ Պատրիարքին տուած արտօնութիւնն է տալու. Պատրիարքն արդէն հրապարեալ է Բ. Գրան առջև. կողմի որ սոյն հրապարակման պատճէնը հոս կարգացուի բայց մոռցայ մինչև այսօր առաջարկելու. Պատրիարքն որչափ որ բաւ գործիք մ'է Աղբին ցաւերը հաս-

կըցնելու որոյ որ կողմէն լսել, բայց կը կարծուի որ ինք իրմէ կընէ և Աղբն իր հետ չէ. հիմա ժամանակն է հասկցնելու որ Պատրիարքն ոչ թէ խնդրմէ կընէ, այլ Աղբն է իրեն ընել տուողը։

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պահ մ'առաջ երբոր Բրիտոստոսը կ'ընեն յուսահատական են, ըսաւ Մեծ Եպարքոսին խօսքերուն համար, Մամիկոնեան կ'ընեն այնքան յուսահատիչ չնկատեց։ Եթէ ներքի ըլլայ, ես չէ թէ յուսահատական, այլ խորհական են պիտի ըսէի, չէ թէ Եպարքոսն զմեզ խորհելու՝ այլ նոյն ինքն խորհած ըլլալով մեզ այդ խօսքերուն ուղղած ըլլալուն համար։ Միթէ մեք մեր վիճակին դարմանն ի՞նչ ըլլալը կը փնտռենք, ոչ. դարմանը գտած ու ցուցած ենք արդէն բոլոր աշխարհի և Երոստայի Պատրիարքով և ժողովներով։ Գարձեալ այս ժողովը յանձնարարած է Ս. Պատրիարքին և Վարչութեան Պէրիի դաշնադրութեան 61րդ յօդուածին գործադրութիւնը խնդրել։ Բայց հիմա մեր առած տեղեկութիւնն այս է թէ յանձնաժողով մը պիտի ղրկուի գաւառները խիստ քան նութիւն մը ընելու համար։ Բանի՞ անգամ որ այս հարստաւորութեան խնդիրը յոգուած է Բ. Գրան և Աղբին մէջ, ամեն անգամուն ալ ասանկ յանձնաժողովներ դրուած են ազգային և Թուրք անդամներէ բաղկացեալ։ Թողունք այլ և այլ ժողովներու մէջ դրուած յանձնաժողովները, նոյն իսկ Մահմուտ Նէտիմ փաշային օրով Բ. Գրան մէջ դրուած մեծ յանձնաժողովը, դեռ մօտ ատեններս Ալի Եֆէփիզ պէյի նախագահութեամբ յանձնաժողով մը ղրկուեցաւ ի Հայաստան, որուն համար կըսուէր թէ վաղօր իշխանութեամբ կերթայ, մինչև իսկ եղեւնագործները առանց Պոլիս հարցունելու կ'ախելու կտրելու արտօնութեամբ. բայց միթէ լսեցի՞ք ցարդ կախուած մէկը։

Անկէ ետքն Էրզրումի մէջ ալ տիվանի էօր. ֆիյէ դրուեցաւ, բայց ի՞նչ ըրաւ, չգիտեմ. սակայն անոր Հայ անդամներէն մէկին նա-

մակը կարգացինք լրագրաց մէջ. որ կըսէր թէ մենք հոս դատելու գործ մը չունինք։ Այս ալ այսպէս։ Հիմա ալ երբ Ս. Պատրիարքը քիչ մը աւելի ստիպած է Բ. Գուռը, եւեր են թէ նոր յանձնաժողով մը պիտի ղրկեն, մեք պէտք չունինք ա՛յլ ևս այդ յանձնաժողովներուն, վասն զի հարստաւորութեանց խնդիրը և Հայոց ազգին կարօտութիւնները քննուած ու հասկցուած են, և սահմանուած այդ նոր յանձնաժողովներն ու քննութիւններն ուրիշ արդիւնք չունին, այլ կը ծառայեն և եթ ժամանակ անցնելու։ Կ'առարկեն թէ Բ. Գուռը Երոստական Տաճարատանի գործերովը պաշարուած է և այդ կողմէն մեծ նեղութիւն կրելուն չունի ժամանակ Հայաստանի վրայ դարձնելու իր ուղադրութիւնը։ Այս, չունի ժամանակ իր ուղադրութիւնն Հայաստանի վրայ դարձնելու, վասն զի Երոստական Տաճարատանի մէջ ապստամբ և զինեալ ժողովուրդներ կան, փոթորիկ կայ, մինչդեռ ասորին Հայաստանի մէջ անմեղ ու անզէն ժողովուրդ մը կայ, քրդաց բարբարոս և սպառազէն հրոսներուն մատնուած, որ կըստան նեն կը քանդեն կը յափշտակեն և կը մնան ազատ ու անապատի շնորհիւ անպիտան պաշտօնակալաց։ Եթէ ժամանակ չունին Հայաստանի այդ անմեղ ժողովուրդը մտածելու, եթէ ինչպէս կըսուի բարենորոգումներ մեծ ծախուց կը կարօտին. սակայն ի՞նչ դժուարութիւն կայ որ գէթ դէնք ու հրաման չեն տար Հայ ժողովուրդին որ զինքը պաշտպանելու համար այդ վայրագ ցեղերու անգթութեանց դէմն ելնէ։ Ինչո՞ւ չեն փոխեր ու պատժեր գէթ պաշտօնատարներն՝ երբ իմաց կուտանք իրենց թէ զրկանքներ ու կեղեքումներ անոնց անտարբերութեամբ կը գործուին։ Երոստական տաճարատանի մէջ և այլ տեղեր յուսադրի պաշտօնակալներով լեցուեցան, և տակաւին հայ պաշտօնակալ մ'անգամ չըղբին Հայաստանի մէջ։ Ի՞նչ արդեօք կրնայ ըլլալ Հայ պաշտօնակալներ անուանելուն, շատ շատ քանի մը հարկւր թուրք պաշտօնակալներ պահաս պիտի ասլին, սակայն երկիրը պիտի բարդաւաճի, և տրքունի դանձն ալ պիտի օգ-

տի Հայոց ձեռք, որ ապստամբիլ չեն ուզեր, այլ բարեկարգել վերաշինել և հաւատարմութեամբ ծառայել ընդհանուրին բարւոյն: Եթէ հայուն ձեռքը զէնք տրուի և կամ պաշտօնի կոչուի, այն ատեն գործադրուիլ պիտի սկսի հաւատարմութիւնը, որ Արեւելեան խնդիրը սուսն է և յորմէ տակաւին կը խրաչուի Հայաստանի մասին: Քանզի եւրոպական Տաճկաստան ապստամբութեան դիմելով կրցաւ կորզել այդ իրաւունքը, իսկ Ասիոյ Հայ ժողովուրդը վասն զի աղերսական կերպով կը խնդրէ, անոր կը դրացուի ամեն հաւատարմութեան իրաւունք:

Աւստի կընդունիմ Քրիստոստուր Էֆէնտիի առաջարկած յանձնաժողովոյ կազմութիւնը, չէթէ Սրբազան Պատրիարքին ձեռքէն տանով այն արտօնութիւնը, զոր Ազգային ժողովը տուած է Ն. Սրբազնութեան հայկական դատը վարելու համար, այլ մօտէն խորհրդակից և գործակից ըլլալով անոր՝ սոյն մեծ ձեռնարկութեան մէջ: Աւարկեն թերիս թէ Սրբազան Պատրիարքին այդ խորհրդատուն ու գործակիցը նոյն ինքն Արշալոյսն է: Ազգային ժողովն սակէ առաջ ալ հարցաւորութեանց խնդիրն ինքն ստանձնած է Ապրիլ և Նոյեմբերեան Էֆէնտիներու վարչութեան օրէն սկսեալ: Վասն զի վարչութիւնը բազմապրազ ըլլալուն չէ կարող բոլորանուէր պարտաւիլ այս խնդրոյն, և նոյն ինքն Արշալոյսն ալ համազուտով ասոր, որ և է գիտողութիւն չէ բրած այն ատեն: Այսօր Հայոց ազգն հարստահարութեանց քննութեան համար յանձնաժողովի պէտք չունի, այլ ըստ որում իր ձեռքը Պէրլինի դաշնագրին 61րդ յօդուածն ունի, ուստի հարկ է նոյն յօդուածին համաձայն ըլլալիք բարենորոգումներն իմաստասիրող յանձնաժողով մ'ունենայ, որ հետամուտ ըլլայ, որ ցոյց տայ Ազգին պէտքերը, և բարեկարգութեան միջոցները և անոնց գործադրութեան համար Ս. Պատրիարքին խորհրդակից դառնի և միանգամայն օժանդակ: Մանաւանդ այժմ որ Արեւելեան Բուլղարի եւրոպական յանձնաժողովը նոյն գաւառին բարենորոգմանց կանոնադիրը կը պատրաստէ, զոր կը կարգանք Մասիս լրագրոյ մէջ,

պէտք է որ զայն ուսումնասիրենք, քանզի եթէ այն օրէնքները Օսմանեան կայսրութեան իշխանութեան ներքեւ եղող մէկ մասին՝ այն է բուլղարի ժողովրդոց վիճակին բարոյքման համար արժան կը դատուին, տարակոյս չկայ որ նոյն իշխանութեան ներքեւ եղող միւս մասին՝ այն է Հայ ժողովրդին համար ալ պէտք է արժան դատուին, որք Պէրլինի դաշնագրին 61րդ յօդուածին ուժով բարենորոգմանց և ազատութեան իրաւունքն ըստոյցած են:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խնդիրը Ս. Պատրիարք Հօր հրաժարականին նկատմամբ: (Խառն ժողովոյ պատգամաւորութեան ուղղեալ հարցման վրայ էր, և պատասխանը լսուելէ ետեւ վիճաբանութեան նիւթ պէտք էր ըլլար այսօր միայն սա կէտը թէ հարկ է՞ արդեօք հարցումը հարցապնդման փոխարկել թէ ոչ: Սակայն վիճաբանութեան չըմանը խոտորեցաւ իւր առանցքէն, և գաւառական հարստահարութեանց վրայ դառնալով՝ այնպիսի խօսքեր սրբորդեցան մէկ երկու ատենախօսներու շըրթունքէն որ չեն ներեր ոչ Ժողովիս ներքին կանոնադիրը և ոչ մեր քաղաքական դիրքը, որ աշխարհավարական լուրջ խորհրդածութեանց հետ զգուշաւոր ոճ և բեմական լեզու կը պահանջեն ամենէն):

Հարկ է սակայն յայտարարել որ այդ բաներն չունին երբէք որ և է թշնամական կամ նախատական իմաստ կամ ոգի, այլ պարզապէս արդիւնք են այն վշտակոծ մարմնքանայ, որով սրտերը գեղուն թաթաղուն՝ կը գործովին Ազգին վիճակին վրայ, որ ճշմարիտը խօսելով անմիջական դառնութեան հասած է: Աւստի տեսնելով Ժողովին ընդհանուր կսկիծն ու սրբոյնութիւնը, որով ես ինքս ալ համակուած էի, տեսիլ լաւ համարեցի համբերել և փոխանակ ընդմիջմամբ փրաւորելու արդէն վիրաւոր և վշտահար հոգիներն վերջէն ըսել ինչ որ պատշաճից օրէնքը կը պահանջեն և ինչ որ ըստ իմ համոզման ամենուս զգայմանց կը պատասխանեն: Գիտեմ ոչ որ ձեզմէ կը տարակուսի Բարձր Մեծ Երարքոսին զգացմանց անկեղծութեանը վրայ:

Նորին Բարձրութիւնը նորեկ ի մեզ երկրին վերածնութեան մէջ կը փնտռէ անշուշտ իւր փառքն ու դէպ ի այդ պէտք է ձգտին իւր ձգտման: Կարգաւորի Նա մեր ցաւալի վիճակին վրայ, և կը խոստանայ ամեն բան ընել անոր անդորրութիւն գտնելուն համար, իւր ցաւակցութիւնն ու խոստմունք այնքան անկեղծ են որ ինչպէս լսեցիք՝ ճանչնալով ինքն իսկ այն արգելքներն որ կրնան խափան ըլլալ իւր իղձերուն, նոյն իսկ պատգամաւորաց ներկայութեան կը մտածէ և կը հարցնէ իւրովի թէ պիտի կարենա՞յ յաջողիլ արդեօք:

Այսպիսի յայտարարութեան մ'առջին մեղուրիչ բան չվայելր այլ մեր խորին յարգանքն ու պատկառանքն արտայայտել Նորին Բարձրութեան և յուսալ իր պատուաւորութեան վրայ իր խոստմանց: Բայց սակայն պարտ է խոստովանիլ որ Նորին Բարձրութիւնը սխալ տեղեկութիւն առած է մեր ձեռնարկութեանց վրայ: մենք ազգովին մեր վիշտերն Բ. Գրան ներկայելէ զաղարած չենք և եթէ սա վերջին ժամանակներս Եւրոպական դահլճաց մէջ արձագանք դառն մեր հարստահարեալ եղբարց հեծեծանքը՝ յանցանքը մերը չէ, այլ նոյն իսկ հարստահարութեանց չափն անցուցած ըլլալն և Պէրլինի դաշնագրութեամբ մեր վեհապետին Հայաստանի մէջ կատարելիք բարենորոգմանց հսկողութիւնն հանդիսապէս իր դաշնակցաց յանձնած ըլլալն է: Այսպիսի պարագայի մէջ և այսպիսի վսեմագի Նախարարի մը օրով գործ ունինք տեսնելիք: պէտք է մեր ազգանուէր Հօր շուրջը բոլորուելով ամեն զոհողութիւն ընենք մեր վիճակը կատարելապէս առաջի տունել անոնց՝ որ սրաւք ունին զայն բարեբեւութեամբ, ինչ որ իրաւունք ունինք պահանջել իբր գործման:

(Համամտութեան եռանդուն ցոյցեր աւանդուած)

Եւ հիմա որ լսեցիք այն զանազան կարծիքներն որ երեւան եկան այս խնդրոյն վրայ, ձեր քուէովն լուծեցէք կաղաչեմ խնդիրը: Զէ կարելի այժմէն հրաժարականի կամ հարստահարութեան խնդրոյն խորը մտնել, և զայս ի

հիմանէ յուղել: այլ զայս որոշեցէք նախ, կ'ուզէք հարցումը հարցապնդման չընել և հրաժարականի խնդիրն հարստահարութեանց և բարենորոգմանց խնդրոյն հետ միահամուռ ընդունելով ձեր սեղանին վրայ այս Ժողովին մէջ յուղել, թէ ոչ՝ լսելով ընդհանրական հարցման պատասխանն, լսելով Ատենապետաց դիւանին քայաւորութիւններն գոհ կ'ըլլա՞ք և թոյլ կուտա՞ք որ խնդիրը մեր առաջնորդաց ձեռքը շարունակուելով իւր բնական լուծմանն յանգի կատարելապէս:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ատենապետ փաշա, շնորհ ըրէք ըսել մեզ թէ ով ե՞ն այդ առաջնորդներն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սրբազան Պատրիարքն և իւր պաշտօնական գործակիցներն:

Եւ Ատենապետ փաշան խնդիրն քուէի դնելով՝ Ժողովն ստուար մեծամասնութեամբ ՈՐՈՇԵՑ Սրբազան Պատրիարք Հօր հրաժարման խնդիրն իւր հետ ունենալով նաեւ գաւառական հարստահարութեանց և խոստացեալ բարենորոգմանց խնդիրն Ժողովին նկատմանն նիւթ ընել և Օրակարգն անցունել անմիջապէս յառաջիկայ նիստին: Իսկ գումարմուն օր սահմանուեցաւ յառաջիկայ ուրբաթ, նիստը դըռնիսկ կատարելու թէութեամբ:

Օ Ր Ս. Կ Ա Ր Գ.

Ա.

Առաջարկութիւն վարկի
Փաղ. Ժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օրակարգնիս նախորդ նիստէն մնացեալ Պիւտճէի վիճաբանութեան շարունակութիւնն է, որուն հասութից կողմին հասած ենք. բայց անոր շանցած վարչութեան Բաղ. Ժողովոյ կողմէ Գիււս.

նառան պաշտօնէից համար վարկի մը առաջարկութիւնը կայ, որուն յայտագիրը պահմը յառաջ կարգադրուելով որոշեցիք ստիպողութիւն տալ և Օրակարգին մէջ առաջնութիւն ընծայել. պէտք է անկէ սկսիք:

Արդ՝ Վարչութիւնը կառավարիչ 1879 տարւոյս յունվարէն սկսեալ մինչ ցվերջ ապրիլի, ամսական 4050 ական դրէն ընդ ամենը 16200 դրէի վարկ մը արտօնել յանուն պաշտօնէից Պատրիարքարանի: Ձեր դիտողութիւնները կը հրաւիրեմ այս մասին. եթէ դիտողութիւն ընող չըլլայ, անմիջապէս քուէի պիտի ենթարկեմ:

Ըստ որում պահմը սպասուելէն ետեւ ոչ ոք դիտողութիւն չըսեմ, Ատենապետ փառան քուէի դրաւ Վարչութեան առաջարկութիւնը զոր Ժողովը միաձայնութեամբ Ընդունեց:

Կեդր. Սնտուկի Հաշուկիտ 1879—80 տարւոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օրակարգը կը ներկայէ մեզ այժմ Կեդրոնական սնտուկի հաշուեկշիռի խնդիրը: Նախընթաց նիստին մէջ ինչպէս կը յիշէք, աւարտեցաւ ծախսոց մասին վիճարանութիւնն ու քննութիւնը: Այժմ պիտի սկսինք հաստիքից կողմը քննել, որ կսկսի ժե. յոգուածէն:

Եւ Ատենապետ փառան նոյն յոգուածն ընթերցելով Ժողովին դիտողութեան ենթարկեց զայն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այս յոգուածը Տրոյ կանոնադրի ծրագրին հետ լծորդելով յետագայը կառավարեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Իրաւունք ունի Փառապետ ԷՖ. Համարակալութեան դիւանը Տեղեկագիր բերած է Ազգ. տրոյ խնդրոյն վրայ, որ արդէն խնդրոց կարգն անցած է, պէտք է անոր վիճարանութեանն ու քուէար.

կուլթեանը ստիպենք որպէս զի այս յոգուածին համար ընելիքնիս գիտնանք: Ուստի եթէ Ժողովը կընդունի, թողունք այս յոգուածն և անցնինք ժ. Ին:

Ժողովը յարեցաւ սոյն առաջարկութեան և անմիջապէս ժ. յոգուածը կարգադրուելով՝ դիտողութեան ենթարկուեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս յոգուածը գաւառաց կողմէ Կեդր. սնտուկին յատկացեալ մուքարա անուն տրոյ կը պատկանի, որուն համար Համարակալութեան դիւանին և Վարչութեան կարծիքները կը տարբերին:

Վարչութիւնը սոյն տրոյ յաւելումներն կառավարիչ. իսկ Համարակալութեան դիւանը յատկանց մերժում և ուրիշ բարեփոխութիւններ: Ձեր կարծիքն ի՞նչ է:

ՊԵՏԼԻԿՃԵԱՆ Ս. ԷՖ. — [Փոխ Ատենապետ Փառ. Ժողովոյ] Համարակալութեան դիւանին ըսածներն մէկքանի տարիի կարօտ է որ գործադրուին:

ՊԱԼԵՕՋԵԱՆ Լ. ԷՖ. — [Պեդր. Փառ. Ժողովոյ] Վարչութիւնը տուրք մը կառավարիչ, և Ազգային Ժողովը կը մերժէ կամ կընդունի. այդ իր գիտնալիք բանն է: Սակայն երբէք տեղ մը չկայ որ տուրք դնող մարմինը՝ զայն վճարելու պարտաւոր եղող կողման հետ բանակցի: Վարչութիւնը հասոյթ գտնելու պարտաւոր էր. ըստ որում քանի որ ծախք կայ, անոր դէմ հասոյթ ալ պէտք է: Վարչութիւնը տեսնելով որ գաւառներն ըստ մեծի մասին իրենց կարողութեան համեմատ չեն վճարեր մուքարայի տուրքը, հարկ սեպեց խրաքանչիւրին կարողութեան համեմատութեամբ վերադիրներ ընել և նոր բաշխման ծրագիր մը բերել յառաջիկայ տարիէն գործադրելի ըլլալու պայմանաւ: Օրինակի համար, Խզմիրի գաւառը տարին 600 դրէ է, մինչդեռ 6 հազար դրէ կրնայ և պէտք է տալ: Այս պէս նաև ուրիշ շատ գաւառներու համար: Եթէ Վարչութիւնը սոյն պարագային մէջ գաւառաց հետ թղթակցութեամբ բանակցութիւններ ընելու ելնէ, ինչպէս կառավարիչ

Համարակալութեան դիւանը, տարիներու պէտք ունի զայն զրուս հանելու համար, ինչպէս ըսաւ մեր ընկերներէն Պէյլիման է. ֆէնտին Եւ քանի որ պիւտճէն այս տարուան համար է, դժուարին է Վարչութեան առկէ տարբեր ձևով առաջարկ մը բերել մուքարայից մասին: Ազգային Ժողովոյ կը մնայ ընդունիլ կամ մերժել զայն. բայց եթէ մերժուի, ընաւանաբար հասոյթը կը պակսի. այն ատեն ուրիշ հասոյթի աղբիւր մը գտնել պէտք է ծախքը հաւասարակշռելու համար:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես կուզէի գիտնալ թէ արդեօք Վարչութիւնը կը կարծէ որ իր բերած մուքարայի բաշխման յաւելումը կան ծրագրին եթէ ընդունուի այս Ժողովէն, գաւառներն քանինք բացեր և պատրաստ կեցեր են ուղղուած ստակները տալու: Տուրքի հաւաքման գործողութեան մէջ միշտ դժուարութիւն կայ. արդեօք Վարչութիւնն ո՞րքան թղթակցութիւններ կը կատարէ և պիտի կատարէ տուրք մը տանելու համար: Վարչութիւնը գրիչ ի ձեռին գաւառական այս տրոյ համար նոր բաշխում մը կատարեր, և իսկ մը վերադրութիւններ ըրեր է իր բացած ծախքին գումարը դիմաւորելու համար. բայց ի՞նչ հիման վրայ, հիմ չկայ: Ես կը տեսնեմ թէ այնպիսի գաւառներէ տուրք կամ արոյց յաւելում կը պահանջուի, որոց համար մենք օգնութիւն տալու առաջարկութիւն կրնենք արդէն: Գաւառներ ալ կան՝ որ Վարչութեան առաջարկած մուքարային եռասարկիւր կըրնան տալ, բայց Վարչութիւնը չէ կրցեր այնչափ յառաջ երթալ և անոնց կարող եղած գումարը սահմանել: Օրինակի համար, Ղաւթիկի եկեղեցին՝ որ տարին երկու հարիւր հազար դրէի եկամուտ ունի, վեց հազար դրէ տուրք մը տալու պարտաւոր նշանակուած է, մինչդեռ Խզմիրի վիճակն՝ որոյ քաղաքին եկեղեցին միայն ու թ հարիւր հազարի տարեկան եկամուտ ունի, նա ալ վեց հազար դրէ նշանակուած է: Ի՞նչ համեմատական չափ կայ այս բաշխումներու մէջ:

Համարակալութեան դիւանի ըսածն Վարչութեան գործելու արգելք մը չէ. նա կըսէ

որ Ազգային Ժողովին բերելէ առաջ բանակցի գաւառաց հետ՝ և երկու կողման համաձայնութեամբ այդ տուրքերը որոշուին:

Գաւառին մէկին այսչափ գումար տուրք տուր պիտի ըսեն. եթէ կանխաւ անոր հաճութիւնն առած չես, և ան ալ մինչև վերջը չեմ տար ըսէ, ի՞նչ պիտի ընես. պիտի կրնամ բանութիւն գործածել: Բանութիւն գործածելու համար պէտք է որ արդարութեան վրայ հիմնեալ ըլլայ պահանջումը: Եւ ըստ որում այժմեան պահանջումը գաւառաց նիւթական կարողութեան վրայ ճշդիւ չափուած չէ, այլ ենթադրութեան վրայ հիմնեալ է, ուստի և արդար չկրնար ըլլալ, և ըստ որում տակաւին գաւառական սնտուկներն հաստատուած չեն, ուստի և անոնց արդեանց քանակութեան վրայ այդ տուրքը հիմնել այժմ՝ անկարելի է. հետեւաբար Գիւանն իրաւունք ունի, որ կառավարիչ թէ, այս մասին պէտք է որ Վարչութիւնը գաւառաց հետ բանակցի և համաձայնութեամբ որոշէ: Այս խնդիրն իր մէջ խիստ փոփոխի և էական կէտ մ'ունի, ծայր մ'ունի, որ թերևս Վարչութեան ուշադրութեան վրայ չէ. ցուցնեմ զայն: Սահմանադրութեան 93րդ յոգուածը կըսէ որ «գաւառներուն կողմէն ազգային Պատրիարքարանի սնտուկին տրուելու մինչև ցարդ սովորութիւն եղած տուրքին բաշխման և հաւաքման եղանակն Ընդհանուր Ժողովը պիտի որոշէ և Բ. Գրան հաճութեամբ պիտի գործադրուի»: Ըսել է թէ Բ. Գրան հաճութիւնը պիտի գայ մտնէ տուր մէջ. արդ երբ գաւառ մը ուղղուած գումարն չտայ և Վարչութիւնն ստիպուի բանութեամբ պահանջել, այն ատեն կըրնան բողոք տալ կուսակալին, և կուսակալն ալ Բ. Գրան պիտի գրէ և Գրան ալ Պատրիարքարանի հետ պիտի պարտաւորի բանակցիլ: Այն փառան մեր Ազգային Սահմանադրութիւնը վտերացնելու ատեն ինչպէս քանի մը էական կէտեր, նոյնպէս գրամական խնդրոյն այս ծայրն ալ իր ձեռքը պահած է: Ես այն կարծիքն չեմ որ Գրանը իրաւունք ունենայ այս միջամտութեան. Ազգն իր ներքին գործոց մէջ պէտք է ազատ ըլլայ. սակայն այժմ այս տեսակ խնդիր հանելու ատե-

նը չէ : Համարակալութեան ղիւանին առաջարկն սոսկալի հետեանքներու դուռը կը գոցէ : Արշալուծին բանակցի դաւառաց հետ ստուգէ անոնց կարողութեան աստիճանը , և համաձայնութեամբ որոշուի իրաքանչիւրին տրոց քանակութիւնը , և այդ տրոց թեմական բաշխումը որ յետոյ ժողովիս կը բերուի ի վաւերացումն :

Այս է այն խնդրոյն ներկայ վիճակին մէջ յաջող և օրինաւոր եղանակաւ լուծումը : Գաւառաց մէջ այս տրոց թիւերուն վրայ բաշխումը տեղ տեղ մեծ յուզումներ հանած է , ինչպէս լսած ենք : Այսինքն զի գաւառ կայ որ հազար զուրուշ տուրք պիտի վճարէ կեդրոնին , կրկնապատիկն ու եռապատիկը կը հաւքէ թեմերէն և աւելորդն իրեն կը վերագրէ , կամ առաջնորդն կիրացնէ , և կամ թեմերու վրայ արդարութեամբ չբաշխեր վճարելի տուրքին գումարը , և մին աւելի միւսը նուազ քանակութեամբ կը մասնակցի այս տրոց , և այսպէս տեսակ մը զեղծում կամ կեղեքում ևս կը գործուի այս տրոց հաւաքման մէջ : Եւ ահա այս պատճառին համար է որ Համարակալութեան ղիւանը կառավարէ նաեւ թէ իւրաքանչիւր Գաւառ . Արշալուծին պարտական ըլլայ իր թեմականաց մուգաթափ բաշխման ցուցակը հաղորդել Կեդր. Արշալուծեան : Այս սակայն պէտք է ամեն վիճակաց մէջ սահմանադրապէս դաւառական սնտուկներու և դաւառական ընդհ. տրոց հաստատութեան հոգ տանիլ , ինչպէս կառավարէ Համարակալութեան ղիւանը , որպէս զի մուգաթափ առնան անկանոն տուրքն ալ վերնայ և ասոր տեղ կանոնաւոր տուրք սահմանուի : Մինչև ցարդ պէտք է որ դաւառական սնտուկներն հաստատուած ըլլային ամեն տեղ :

Այս նկատումներով Համարակալութեան ղիւանի առաջարկին կը համաձայնիմ :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Արշալուծեան առաջարկած մուգաթափ բաշխումը շատ յիշ է . պէտք է որ եւեռնայ , մանաւանդ հիմա : Այս մուգաթափները սահմանուած ժամանակ , դուռմարը 130 հազար էր հինգնոցը հինգ զրո ըլլալով , ինչպէս զիտէ Ասապո Յֆէնտին որ

Տնտեսական ժողովոյ պաշտօն վարած եմք այն ատեն : Բայց գաւառները մէյմէկ աղդեցուցեամբ իջուցեր են այս գումարը . 500 զրո տարու կարողութիւն ունեցող գաւառ մը 300 զրո . կուտայ : Քիւրքճիխանեան էֆէնտին զիտէ որ Եղիպտոսի առաջնորդ Մեսրոպ Եսիւկոսն իր առաջնորդական ֆէրմանն առած միջոցին , Քաղարական ժողովոյ մէջ 50 լիւրս մուգաթափ տարու խոստացաւ . վստահ չի Եղիպտոսի վիճակը կարող էր տալ , և ինչո՞ւ չտար . սակայն երթալէն ետեւ մինչև որ 20 լիւրայի հանցեցինք , շատ դժուարութիւններ կրուեցաւ : Կըսեն թէ գաւառաց հետ բանակցութեամբ հաճութիւնին գրաւելու և այնպէս եւեղցնելու է մուգաթափը . եթէ բանակցելով անոնց խիղճն արթնցնելու համար է , շատերուն խիղճն այս է որ բնաւ ստակ չտան և չօգնեն կեդրոնին . հիմա թղթադրամի սլաժառու հարկը զրոն տեղ 22 զրո կառնենք ըսել է , այն ալ չիտկէ չիտակ տալ չեն ուղեր , սյլ կուզեն որ անցուկ դրամով վճարեն : Իզմիրի պէս վիճակ մը 600 զրո մուգաթափ անցուկ դրամով վճարել կառավարիչ , բայց Ելեւստից Հոգաբարձութեան տուժարները , և կը տեսնէք : Թէ որ գաւառները մուգաթափն եւեղցնել չեն ուղեր , գոնէ բուն սահմանուած ատենն գումարն ինչ էր նէ այն թող տան կամ կէսը տան : Օրինակի համար՝ Սեբաստիոյ գաւառը՝ թէ որ մուգաթափն սահմանուած ատենը 40 ոսկի կը վճարէր թող կէսը տոյց այսօր , այն ալ կը բաւէ : Եթէ մեր հասութիւց կողմը չբարւոյն , ծախսոց կողմը չախտի կրնանք ուղածնուս պէս յարմարցնել : Կը տեսնէք այս տեղ ղիւանադպիր Բարթող էֆէնտին , 1250 զրուշ ամսական կառնէր ոսկին 125 զրո եւ զած ժամանակ . իսկ հիմա 1200 զրո կառնու թղթադրամով . ինչպէս կրնայ ասորիւ մանաւանդ որ ինքը փափակեաց մէկն է : Պատրիարքարանի գանձապահ Խաչիկ աղան կայ , ան ալ ոսկին 130 եղած ժամանակ 400 զրո կառնէր , հիմա ալ նայնը կառնէ թղթադրամով տալ բարի և հաւատարիմ անձ մ'է :

Այս կերպով պաշտօնէութիւնը չկրնար ասորիւ և կէս կուշտ կը մնայ : Ըսել կուզեմ

որ այս մուգաթափներուն գործը շտկելու է . վստահ չի Կեդր. սնտուկին մէկ գլխաւոր հասցիքն է : Կառավարիչմ որ հին բաշխման համեմատութեամբ ամենն ալ կէսը տան մուգաթափի տրոց , բայց ոսկի տալու պայմանաւ : Այսպէս պէտք է ըլլայ :

ՊԱԼԵՕՋԵԱՆ Լ. ԷՅ. — Արշալուծինը շատ գոհ կըլլար եթէ Համարակալութեան ղիւանի առաջարկը գործադրելի ըլլար . բայց Արշալուծինն անգործադրելի կը նկատէ . տարիներու կարօտ է մինչև որ հասկըցուի թէ գաւառներուն կողմէն պիտի ընդունուին թէ ոչ . և եթէ չընդունուին , Արշալուծինն ինչ պիտի կրնայ ընել :

Փափաղեան էֆ. կըսէ թէ կան այնպիսի գաւառներ , որոց մուգաթափի տուրքը շատ սրկաս գրուած է և կան ալ որ շատ եւել գրուած է . որոնք են արդեօք՝ թող չնորհ ընէ ցուցնել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Ձեզի կարճ պատասխանը տամ . մուգաթափի նոր բաշխումն ինչ հիման վրայ ըրեր էք , նախ դուք ըսէք զայդ , և այն ատեն ձեր հարցման սրտաստանը ինքն ինքնին պիտի առնուք . բայց ես աւելի առաջ կերթամ ու կըսեմ թէ բնաւ հիմ չունի Արշալուծեան կատարած բաշխումը , և չէ կարելի Ազգ. Ժողովին տրոց յաւելման առաջարկ մը կամ ծրագիր մը բերել այսպէս առանց հիման , և չէ կարելի որ Ազգ. Ժողովն բուէտրիկէ զայն առանց համոզուելու անոր արդարութեանը :

Արշալուծինը կուզէ որ առանց արդարութեան վրայ հիմնուած ըլլալու տուրքի մը բաշխումն այս Ժողովին բուէն անցնի : Ոչ , չէ հարկ ընել զայդ : Քիչ մը առաջ Քրիստոստուր էֆէնտին՝ որ մեծ փորձառութիւն ունի Արշալուծեան եւրոպական ճիւղին մէջ , դէպք մը յիշեց . Եգիպտոս , ըսաւ , 50 ոսկի մուգաթափ տալ խոստացաւ և հաղիւ 20 ոսկի տուինք : Նոյն իսկ Պալեօղեան էֆէնտին Արշալուծեան բերնէն կը հարցնէ թէ եթէ

գաւառները չտան ինչ պիտի ընենք : Բայց եթէ որոշումն այս Ժողովին բղխի , պիտի տա՞ն գաւառներն՝ երբ անիրաւ ու անարդար է արհանձնում , և երբ իրենց կարողութենէն վեր է : Ուրեմն ինչո՞ւ ինքզինքնիս խաբենք : Եթէ Պիւտճէին մէջ ինչպէս որ առաջարկուած է , այնպէս ընդունինք , Արշալուծինը վստահութիւն կուտայ որ մինչև տարեգլուխ 139 հազար զրո պիտի հաւարէ : Եղիպտոսի առաջնորդը մինչդեռ հոս էր , իր առաջնորդական ֆէրմանը ձեռք անցընելու համար , երբ 50 ոսկի մուգաթափ ուղուեր է իրմէ , ընդունելու խօսք տուեր է . բայց տեղն երթալէ ետեւ հաղիւ 20 ոսկի զրկեր է : Այս գործերուն մէջ մեք ալ քիչ շատ փորձառութիւն ունեցանք . Պալեօղեան էֆ. թէ որ մեր Արշալուծեան օրուան տուժարներն աչքէ անցնէ , պիտի տեսնէ թէ այս մասին մեք բաւական փորձեր ըրած եմք արդէն . մինչդեռ ինք այժմ առանց փորձելու՝ լոկ ենթադրութեան վրայ հիմնելով այս առաջարկութիւնն անգործադրելի կը նկատէ :

Արշալուծինը խօսքս կեդրոնականեմ թէ ամենէն օրինաւորն ու գործնականը Համարակալութեան ղիւանին առաջարկութիւնն է . ուրիշ միջոց չեմ տեսներ :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Ըստ իմ կարծեաց Արշալուծինն ազատ մնալու է տուրք ուղեւու և հաւարելու մասին , որ կարենայ որոշեալ ծախքերն ընելու :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՅ. — Այս մուգաթափի խնդիրը բանի որ ինքզինքս գիտեմ , ամենէն կնճառող գործն է Արշալուծեան մէջ . միշտ դժուարութեան ենթակայ եղած է ասոր հաւարումը . Արշալուծինն անուղղակի միջոցներով կրցած է հաւարել այս տուրքը գաւառներէն՝ կամ գործերէն ինկած ատեն և կամ առաջնորդ մը փոփոխուելու առթիւ . և ամեն տարի առնելիքներ մնացած են . եթէ տուժարները նայուի պիտի տեսնուի թէ ո՞րչափ մուգաթափի հին առնելիքներ զիջուած մնացած են : Թէ Համարակալութեան ղիւան

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Տ. Մկրտիչ	Ս. Արքեպս.	Խորմեան	Ա. Ատենապետ
2	Տ. Խորէն	Ս.	» Նար-պէյ	
3	Տ. Կարապետ	Ս.	Եպս. Սերովբեան	
4	Տ. Մատթէոս	Ս.	» Իզմիրլեան	Բ. Ատենապետ
5	Տ. Ամբրոսիոս	Ծ.	Վրդ. Ուսերինեան	
6	Տ. Գարեգին	Ծ.	» Թաթարեան	
7	Տ. Եղնիկ	Ծ.	» Ապաշուհի (Առաջն. սաշառնիւ դուրս դաշտած)	
8	Տ. Իգնատիոս	Ծ.	» Շիշմեան	
9	Տ. Հմայեակ	Ծ.	» Դիմաքսեան	
10	Տ. Ներսէս	Ծ.	» Ասլանեան	
11	Տ. Պօղոս	Ծ.	» Խօշտամեան	
12	Տ. Արիստակէս	Աւագ Բէշյ.	Մամբրէեան	
13	Տ. Խորէն	»	Փէշկիւմեան	Բ. Ատենապետ
14	Սահակ	»	» Տ. Սարգսեան	Ա. Ատենապետ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Առաքել	էֆէնտի	Ալթուն Տիւրքի	Ա. Ատենապետ
2	Գէորգ	»	Սթիմարանեան	Ա. Ատենապետ
3	Գէորգ	»	Գըլըճճեան	
4	Կարապետ	»	Հաղարեան	
5	Լօղօֆէթ	»	Պալեօզեան	
6	Մատթէոս	»	Ալիքսանեան	Բ. Ատենապետ (Հրաժարեալ)
7	Մարտիրոս	»	Միւհէնտիսեան	
8	Մկրտիչ	»	Ֆրէնկեան	
9	Յակոբ	»	Զօստնեան	
10	Յարութիւն	»	Սահակեան	
11	Սահակ	»	Ղաղարոսեան	
12	Սենեքերիմ	»	Մանուկեան	
13	Ստեփան	»	Պէյլիկճեան	
14	Տիգրան	»	Բարաղամեան	Բ. Ատենապետ

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՅԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և Ղալաթիոյ
Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկալը և Հայ գրալաճառաց քով: